ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

ՈՐՈՇ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԷՔԵԱԹՆԵՐՈՒՄ

Գ.

Շարքիս նախորդ յօդուածում[1] իբրեւ հայկական հրաշապատում հէքեաթների օրացուցային վերլուծութեան արդիւնք ստացանք, որ քննարկուած **հէքեաթների իրադարձութիւնները տեղի են ունենում Ամանորի գիշերը եւ գիշերուայ հէնց ա՛յն հրաշալի պահին, երբ աւարտւում է հին տարեշրջանը եւ սկսւում է նորը:**

Այս՝ նոր ստացուած տուեալը հնարաւորութիւն է ընձեռում քննարկելու այն հարցը, թէ **ըստ էութեան ի՞նչ տօն է Ամանորը**: Այս հարցը կարող է առաջին հայեացքից անսպասելի, անսովոր թուալ: Այսօր Ամանորի տօնը ընկալւում է իբրեւ **ինքնին հասկանալի**, բացատրութեան կարիք չունեցող իրողութիւն: Սակայն փորձենք նայել սրան փոքր-ինչ այլ տեսանկիւնից:

Իւրաքանչիւր տօն ամեն ինչից զատ նաեւ (նախ եւ առաջ) օրացուցային իրողութիւն է: Իսկ օրացոյցը, ինչպէս գիտենք, կրօնական իրողութիւն է, պարտադիր բաղադրիչ մասն է կրօնի[2]: Ուստի, տօնը եւս, որպէս այդպիսին, պիտի լինի կրօնական իրողութիւն: Այսինքն, ամեն տօն իր բոլոր բնութագրական յատկանիշներից զատ պիտի ունենայ նախ եւ առաջ կրօնական բովանդակութիւն, կրօնական իմաստ:

Այս առումով Ամանորի տօնն ունի իւրայատուկ «կարգավիճակ»: Ինչպէս տարբեր առիթներով բազմիցս նշուել է, Ամանորի տօնը չունի ոեւէ քրիստոնէական բովանդակութիւն, կապուած չէ քրիստոնէական կրօնի համար էական ոեւէ իրադարձութեան հետ: Այս տօնը չունի նաեւ մեզ այսօր յայտնի ոեւէ ա՛յլ կրօնի հետ կապուած բովանդակութիւն, **կապուած չէ ոեւէ կրօնի համար էական կարեւորութիւն ունեցող իրադարձութեան հետ**[3]: Ուրեմն, բնական է մտածել, որ Ամանորի տօնը կապուած պիտի լինի մեզ այսօր անյայտ մի կրօնի համար էական ինչ-որ իրադարձութեան հետ, այսինքն, Ամանորը պիտի լինի այդ՝ մեզ անյայտ կրօնական իրադարձութեան նշումը:

Ինչպէս վերը (շարքիս նախորդ յօդուածներում) տեսանք, մեր քննած հէքեաթներում ժամանակային առումով ներկայացուած է ամբողջ տարեշրջանի պատկերը: Ընդ որում, մի կողմից այդ տարեշրջանը պատկերուած է իբրեւ հէքեաթի բոլոր գործողութիւնների ամբող-

1 «Էջմիածին», 2009, ԺԲ, էջ 62 – 83:

2 Տե՛ս այս մասին, օրինակ, **Գ. Բրուտեան**, Օրացոյց Հայոց, Ս. Էջմիածին, 1997, էջ 11–17:

3 Անշուշտ, հնարաւոր է, որ այսօր յայտնի որոշ կրօնների մէջ պահպանուած լինեն այս տօնի բուն նախնական իմաստը բացայայտող տարրեր, սակայն ինձ յայտնի չեն օրինակներ, որ բացայայտ ցուցանեն, թէ ի՞նչ կրօնական – դիցաբանական իրադարձութեան յիշատակ է նշում Ամանորին:

ջութիւնը, իսկ միւս կողմից՝ «տեղատորուած» է մեն մի եզակի պահի՝ տարեմուտի մէջ, երբ կանգ է առնում ժամանակը եւ տեղի են ունենում ամենամեծ հրաշքները: Փասփօրէն, այդ եզակի պահը դրուած է ժամանակի բնականոն–սովորական ընթացքից դուրս, ընդհանրապէս՝ ժամանակից դուրս, համարժէք է դարձուած յաւէրժութեանը: Եւ սա՛ է պատճառը, որ հէնց այդ եզակի պահին հնարաւոր են գուշակութիւններ՝ ապագան իմանալը, զի այդ պահի համար ժամանակային սովորական օրինաչափութիւնները «չեն գործում», այսինքն, այդ պահին «խզուած են» իրադարձութիւնների միջեւ սովորական պատճառական կապերը: Իսկ ժամանակի մեզ յայտնի ամբողջ ընթացքի մէջ այդ «սովորական» պատճառական կապերը իրադարձութիւնների միջեւ գործում են **միշտ**: Ուրեմն, այդ կապերը չեն գործի միմիայն ժամանակի՝ մեզ յայտնի ընթացքից դուրս: Ժամանակի ընթացքից դուրս է միայն ժամանակի սկսուելուն նախորդող վիճակը[4]: Այսինքն, այն, ինչ եղել է «ժամանակի սկսուելուց» առաջ: Իսկ սա նշանակում է, որ դա պիտի լինի հէնց **արարչութեան** պահը, սկիզբը, այն **անժամանակ** կամ «**նախաժամանակ**» վիճակը, որ նախորդել է արարչութեան սկզբին, երբ առաջին օրով, փասփօրէն սկսում է ժամանակը[5]: Ստացւում է, որ **Ամանորի փօնը իր կրած խորհուրդով սերտօրէն աղերսւում է աշխարհի արարչութեան հետ**:

Արարչութիւնը, բնականաբար, պէտք է լինի ամենահիմնական, ամենագլխաւոր կրօնական իրադարձութիւնը՝ անկախ կրօնի բնոյթից[6]: Միւս կողմից՝ Ամանորը տարեկան տօնների գլուխն է, առաջին եւ ամենագլխաւոր տօնը, որ նշւում է բացառիկ ճոխութեամբ: Այսինքն, մի կողմից ունենք կրօնի գլխաւոր իրադարձութիւնը՝ արարչութիւնը, միւս կողմից՝ կրօնական իրողութիւն հանդիսացող տօների մէջ գլխաւորը՝ Ամանորը: Ունենք նաեւ, որ Ամանորի տօնը իր խորհրդով սերտօրէն աղերսուած է արարչութեանը: Սա թոյլ է տալիս եզրակացնելու, որ այս երկու գլխաւոր իրողութիւնների միջեւ հնարաւոր ամենաբնական առնչութիւնը դրանց զուգադրումն է: Ուստի, բնական է եզրակացնել, որ կրօնի գլխաւոր, հիմնական իրադարձութեանը համապատասխանի տօներից եւս գլխաւորը, հիմնականը: Այսպիսով, որոշակի առումով, կարելի է ասել, որ հասկանալի է դառնում նաեւ բուն տարեմուտի – Ամանորի տօնի իմաստը: Ստացւում է, որ մեր քննարկած հէքեաթների իրադարձութիւնների ժամանակային վերլուծութեան համաձայն **Ամանորի տօնը** ըստ էութեան **պիտի եղած լինի արարչութեան տօն**:

Նայենք, թէ նշուածից զատ ուրիշ ինչ տուեալներ ունենք Ամանորի տօնի այսպիսի ընկալումը հաստատող (կամ հերքող):

Նախ նկատենք, որ հնագոյն դիցաբանական պատկերացումներում արարչագործութիւնը շատ սերտ շաղկապուած է **վիշապամարտի** հետ: Յիշենք, թէկուզ, Մարդուկի կռիւը Տիամատ վիշապի հետ եւ, իբրեւ այդ վիշապամարտի արդիւնք՝ պարտուած Տիամատի

4 Անշուշտ, այս նոյնը վերաբերում է նաեւ ժամանակի «աւարտին» յաջորդող վիճակին, այսինքն՝ «աշխարհի վերջին»: Սակայն մեր խնդրի համար դա էական չէ, ուստի՝ այդ տարբերակը չենք քննի: Բացի այդ, իրենց եզակիութեամբ այդ երկու հակադիր վիճակները համարժէք են, որով եւ՝ նոյնական:

5 Այս նոյնն է նկարագրուած նաեւ Աստուածաշնչում: Այստեղ եւս ժամանակը սկսում է արարչագործութեամբ. տե՛ս Ծնունդք, Ա, 1 – 5:

6 Դրա համար անհրաժեշտ է միայն, որ տուեալ կրօնը պարունակի աշխարհի արարչութեան, արարչագործութեան գաղափարը: Իսկ արարչութեան գաղափարը ընդհանուր է բոլոր կրօնների համար: Եւ արարչութիւնով էլ սկիզբ է առնում այն ամենը, ինչին այս կամ այն կերպ անդրադառնում է իւրաքանչիւր կրօն: Ուստի, ճիշդ է վերի պնդումը, որ արարչութիւնը հիմնական, գլխաւոր կրօնական իրադարձութիւն է՝ անկախ կրօնի բնոյթից:

մարմնից երկրի ու երկնքի արարումը[7]: Նոյնի տարբերակներն ունենք նաեւ Հայկական հնագոյն դիցաբանութեան մէջ: Այստեղ եւս ի դէմս Հայկի, Արամի եւ այլոց ունենք վիշապամարտիկ հերոսի յստակ յատկանիշներով կերպարներ: Ընդ որում, Հայկը վիշապամարտիկ լինելու հետ մէկտեղ նաեւ տիեզերաստեղծ գործառոյթներ ունի, նրանով է սկսւում օրացոյցը, այսինքն՝ նաեւ ժամանակը. Հայկը անուանակոչում է (որ նոյնն է, թէ արարում է) Հայոց երկիրը, ժամանակի միաւորները՝ ամիսները նրա զաւակներն են[8], որոնց, բնականաբար, հէնց ինքն էլ պիտի անուանակոչած լինի[9]: Այսինքն, հնագոյն պատկերացումների համակարգում վիշապամարտը արարչագործութեան հիմնական բաղադրիչ մասն է: Ունենք նաեւ ուղղակի վկայութիւն Հայոց Նաւասարդի-Ամանորի տօնը վիշապամարտի հետ առնչուած լինելու մասին, որ պահպանուել եւ մեզ է հասել Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու՝ քաջ յայտնի նամակում՝ ուղղուած Մոկաց եւ Մանազկերտի Գրիգոր եպիսկոպոսին[10]: Այս նամակի շնորհիւ մեզ է հասել Արտաշէսեան վէպից մի հատուած՝ նուիրուած Նաւասարդեան տօնին (*Ո՛ տայր ինձ զծուխս ծխանի...*): Բացի այդ, այս նոյն նամակում հեղինակը շարադրել է Նաւասարդի (իմա՛ Ամանորի) տօնի հետ աղերսուող ժողովրդական–դիցաբանական պատկերացումների որոշ հատուածներ[11]: Ըստ Մագիստրոսի նամակի՝ ժողովրդի մէջ պահպանուած դիցաբանական պատկերացումների համաձայն Նաւասարդեան տօնին եղել են դիցաբանական էակների (Զիածինի, Մակավազեանի, Արէսի (հաւանաբար՝ Արայի), Դորիական Տաւարի, Քաղի) գործողութիւններ, որոնք թէ՛ ուղղակի, եւ թէ՛ անուղղակի աղերսում են վիշապամարտի հետ:

Ամանորի եւ վիշապամարտի սերտ աղերսի մի այլ վկայութիւն է հէքեաթների հետեւեալ դրուագը: Տղան Մութ աշխարհում հիւրընկալ պառաւից ջուր է խնդրում: Պառաւը տղային ջրի տեղ իր մէզն է տալիս խմելու[12]: Սա հասկանալու համար յիշենք, որ հնդիրանական ժողովուրդների նախնական շրջանում եղել է ծէսերից առաջ ծիսական ամանները լուանալ-մաքրելու սովորոյթ: Իսկ եթէ մինչ այդ ամանը պղծուած է եղել (օրինակ, մեռած մարմնի դիպչելով), ապա այդ ամանները մաքրել են յատուկ հականեխիչ նիւթով: Եւ, որպէս այդպիսի հականեխիչ նիւթ կիրառուել է կովի մէզը[13]: Այսինքն, **էգ կենդանու՝ կովի մէզը կիրառուել է ծիսական մաքրագործման նպատակով**:

Հէքեաթի նշեալ դրուագում ըստ էութեան ունենք նոյն մաքրագործման ծէսը. պառաւը, գալիք վիշապամարտից առաջ տղային իր մէզը խմեցնելով, ըստ էութեան կատարում

7 Տե՛ս, օրինակ, "Мифы народов мира", т. 2, Советская Энциклопедия, Москва, 1992, էջ 110, 505:

8 Տե՛ս Արմէն Պետրոսեան, Արամի առասպելը հնդեւրոպական առասպելաբանութեան համատեքստում եւ Հայոց ազգածագման խնդիրը, «Վան Արեան», Եր., 1997, էջ 24 – 26:

9 Մեզ է հասել նաեւ այս անուանակոչութեան ուղղակի վկայութիւն: Այսպէս, հ. Ղ. Ալիշանը վկայակոչում է Յովհաննես Երզնկացու մի տեղեկութիւնը. «*Այր ոմն զՄատրան ամիս՝ ի Հոռի փոխարկեաց, որոյոյն իւրոյ Խոռէն կոչելով...*»: Տե՛ս հ. Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 140: Ինչպէս այլ առիթով ցոյց է տրուել, այստեղ խօսքը վերաբերում է Հայկին եւ նրա որդի Խոռին, որի անունով էլ կոչուել է Հայոց Հոռի ամիսը: Տե՛ս Գր. Բրուտեան, Օրացոյց Հայոց, էջ 398:

10 Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխատասիր. Կ. Կոստանեանի, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 86 – 87:

11 Այս նամակի, դրա պարունակած՝ Արտաշէսեան վէպի հատուածի եւ այլ տեղեկութիւնների մանրամասն վերլուծութիւնը տե՛ս Գր. Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին. Գրիգոր Մագիստրոսի տոմարական հանելուկն ու Արտաշէսեան վէպի հատուածը, «Էջմիածին», 1992, Դ – Ե, էջ 95 – 118:

12 ՀԺՀ, հ. 13, էջ 9 - 13, նոյնը կայ նաեւ ՀԺՀ, հ. 3, էջ 274 – 282-ի հէքեաթում:

13 Տե՛ս այս մասին **Мэри Бойс**, Зороастрийцы, верования и обряды, "Наука", Москва, 1988, էջ 13:

է մաքրագործման ծէս հերոսամարտից առաջ: Այստեղ առկայ է նաեւ այդ մաքրագործման «անհրաժեշտութիւնը». տղան մինչ այս պառաւի մօտ հասնելը տարբեր աշխարհներում կռուել է դեւերի հետ, յաղթել–**սպանել** է նրանց, **կտրել նրանց ականջները** ու լցրել գրպանը եւ այլն: Այս ամենը (սպանութիւնները, պարտուած–սպանուած հակառակորդների ականջները կտրելը եւ այլն) կարելի է դիտել իբրեւ պղծող գործողութիւններ (նա որոշակիօրէն առնչուել է մեռած մարմինների հետ, դեռ դրանց առանձին «մասեր» դրել է գրպանը): Այսինքն, տղան պառաւի մօտ հասել է արդէն «պղծուած» վիճակում, եւ, ուրեմն, կարիք կայ նրան մաքրելու–ծիսական մաքրագործում անելու, որ եւ կատարում է սոյն պառաւը: Ընդ որում, մեզ հասած հէքեաթների բոլոր տարբերակներում սա միակ դրուագն է, ուր կատարւում է այս տեսակ «տարօրինակ» մաքրագործում:

Հէքեաթի այս (էական) դրուագի եւ վերը վկայակոչուած՝ հնդիրանական ժողովուրդների նախնական շրջանում եղած՝ հականեխիչ նիւթով մաքրագործման ծէսի միջեւ առընչութիւնը չի սահմանափակւում միայն դրանց նմանութեամբ: Ինչպէս տարբեր առիթներով նկատուել է, այս պառաւը զուգահեռն է, այլափոխուած կերպարն է Անահիտ մայր դիցուհու[14]: Իսկ միւս կողմից գիտենք, որ Անահիտ դիցուհու տոտեմը՝ խորհրդանշական կենդանին, եղել է հէնց կովը, երինջը[15]: Հետեւաբար, հնդեւրոպացիների մօտ եղած՝ կովի մէզով մաքրագործումը նոյնական է դրա մարդակերպ դիցական կերպարին՝ Անահիտին, որով եւ՝ վերջինիս կերպաւորող պառաւի մէզով տղայի մաքրագործմանը եւ նախապատրաստմանը գալիք վիշապամարտին:

Այս ծէսի եզակիութիւնը հիմք է տալիս եզակի համարել նաեւ դրան յաջորդող վիշապամարտը: Այսինքն, այս վերջին վիշապի հետ մղուող մարտը ինչ-որ էական յատկանիշներով պիտի էապէս տարբեր լինի հէքեաթներում նկարագրուած միւս բոլոր վիշապամարտերից: Եթէ ասէ յիշենք, որ հէքեաթի որոշ տարբերակներում տղան այս վերջին **վիշապին թրով կիսում է ծայրէ ի ծայր**, ապա միանգամայն հասկանալի կը դառնայ ա՛յս վիշապամարտի եզակիութիւնը: Նշեալ յատկանիշով սա նոյնանում է Մարդուկի տիեզերաստեղծ վիշապամարտին, որի արդիւնքը կիսուած Տիամատ վիշապի մարմնի կէսերից աշխարհի ստեղծումն է: Այսինքն, իրօք, այս պարագայում ունենք ամենաբացառիկ **վիշապամարտը, որի արդիւնքը արարչագործութիւնն է**:

Նկատենք, որ հէքեաթում պահպանուած այս եզակի հնագոյն մաքրագործման ծէսի զուգահեռ – վերապրուկ է «զոքանչի ձուածեղի» մասին հայկական ժողովրդական հաւատալիքը, թէ իբր զոքանչը յատուկ իր մէզն է դնում իր ապագայ փեսայի համար պատրաստուած ձուածեղի մէջ (ներկայումս սա բացատրւում է նրանով, որ իբր այդ կերպ ապահովւում է ապագայում փեսայի լաւ վերաբերմունքը զոքանչի նկատմամբ)[16]: Եթէ յիշենք, որ հնում

14 Յ. Օրբէլին ես Անահիտի հետ է նոյնացնում դիցավէպի՝ Դաթի ճիտի արտատէր պառաւին, որ, ըստ էութեան չի տարբերւում առաջին ճիտի այս պառաւից: Այս երկու պառաւներն էլ նոյն գործառոյթն են կատարում, փաստական **մայրութիւն** են անում հերոսին, օգնում խորհուրդներով վճռական մարտից առաջ, բացայայտում էական գաղտնիքներ. տե՛ս **Յ. Օրբէլի,** Նախաբան, Սասունցի Դաւիթ, Հայպետհրատ, Եր., 1961, էջ LIV – LV:

15 Տե՛ս, օրինակ, հ. **Դ. Ալիշան,** Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 269, **Համազասպ Խաչատրեան,** Անահիտ աստուածուհու պաշտամունքի մի դրսեւորում անտիկ Շիրակում. «Գիտական աշխատութիւններ 1» ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազօտութիւնների կենտրոն, Գիւմրի, 1998, էջ 42 – 48:

16 Զոքանչի ձուածեղի մասին այս բացատրութիւնը ես ինքս լսել եմ Լոռու գիւղերում 1980-ականներին:

ամուսնութեանը նախորդող պարտադիր ծիսական գործողութիւնների մէջ եղել են տարբեր մարտեր (փեսացուների, ինչպէս նաեւ՝ հարսնացուի եւ փեսացուի միջեւ), ապա «զոքանչի (մէզով) ձուածեղ» ուտելը եւս կարելի կը լինի դիտել իբրեւ հերոսամարտին նախորդող միեւնոյն մաքրագործման ծէսի վերապրուկ[17]: Եւ, բացի այդ, ինչպէս մեր խնդրոյ առարկայ հէքեաթների մէջ, այնպէս էլ Սասնայ Ծռերի համարեա բոլոր պատումներում ունենք հերոսի ամուսնութեանը պարտադիր նախորդող տարբեր կռիւներ (այլ փեսացուների, հէնց հարսնացուի, տարբեր զօրքերի, հսկաների, դեւերի ու վիշապների հետ):

Այս տիեզերապտղեղծ վիշապամարտի մի այլ դրսեւորումն է Սասնայ Ծռերում Դաւիթի եւ Մելիքի կռիւը, որի յաղթական աւարտին Դաւիթը (դարձեալ թրով) կիսում է Մելիքին: Նոյնիսկ այս կապակցութեամբ կայ քեռի Թորոսի միջամտութիւնը. նա յատուկ գալիս եւ խստիւ պատուիրում է՝ Մելիքին անպայման կիսել-բաժանել **հաւասար** կէսերի: Մելիքը նոյն վիշապն է, եւ նրան հաւասար կէսերի բաժանելը ունի տիեզերապտղեղծ գործողութեան առումով յատուկ կարեւորութիւն: Դիցավէպի պատումներից մէկում Դաւիթը Մելիքի աջ կէսը տանում է ժամով–պատարագով թաղում, իսկ ձախ կէսը մնում է անտէր եւ շների ու գայլերի բաժին դառնում[18]: Այսինքն, այս կէսերը ունեն յատուկ կարեւորութեան՝ **իրար հակառակ** նշանակութիւններ: Սրան զուգահեռ յիշենք, որ Մարդուկը Տիամատի մարմնի կէսերից ստեղծում է երկինքն ու երկիրը, որոնք պատկերացուել են հակառակ սեռերով. երկիրը՝ իգական (մայր), երկինքը՝ արական[19]: Ուրեմն՝ այդ վիպաշի կէսերի հաւասարութիւնը պիտի նշանակի հաւասարակշռուած աշխարհի ստեղծում:

Այս կապակցութեամբ արժէ յիշել նաեւ, որ մեզ հասած հայ միջնադարեան տիեզերագիտական, տոմարական գրաւոր աղբիւրների համաձայն իրար հաւասար են եղել երկրի եւ երկնքի չափերը (երկուսն էլ՝ 180 000-ական ասպարէզ[20]): Բնական է, որպէսզի իրար հաւասար լինեն երկրի եւ երկնքի չափերը, անհրաժեշտ է, որ հաւասար լինեն նաեւ նախագոյ տարերքի այն հատուածները, որոնցից դրանք ստեղծուել են: Այսինքն, վիշապի (դիցավէպում՝ Մելիքի) մասերի պարտադիր հաւասարութիւնը (կամ, աւելի ստոյգ՝ դրա արդիւնքը) տեսնում ենք երկրի ու երկնքի մասին արդէն քրիստոնէական ժամանակներում առկայ միջնադարեան պատկերացումների մէջ:

Յատկանշական է նաեւ, որ Մելիքին կիսելուց յետոյ Դաւիթի թուրը շարունակում է իր ընթացքը եւ իջնում–հասնում «սեւ ջրին», եւ միայն Աստուծոյ (հրեշտակի) միջամտութեամբ է, որ այդ «սեւ ջուրը» երկրի երես չի ելնում (այլապէս համաշխարհային աղետ կը լինէր, աշխարհը կը կործանուէր): Անշուշտ, այս «սեւ ջուրը» նախագոյ Ջուր տարերքի նշանակն է,

17 Հնարաւոր է այս նոյն մաքրագործման ծէսի հետ կապել նաեւ հնում տարբեր մարզական մրցումներից առաջ ընդունուած թանկարժէք ձէթերով եւ այլ նիւթերով օծումները:

18 «Սասնայ Ծռեր», հ. Ա, Եր., 1936, էջ 283:

19 Սա յստակ արտայայտուած է յունական դիցաբանութեան մէջ, ուր երկիրը՝ Գէան, յղիանում է երկնքի՝ Ուրանոսի արեան կաթիլներից եւ ծնում գիգանտներին: Նոյնն է նաեւ ըստ հայկական պատկերացումների. այստեղ եւս երկիրը իգական է, երկինքը՝ արական: Ուշագրաւ է, որ որոշ այլ դիցաբանութիւնների մէջ սրանց սեռերը հակառակ են. օրինակ, եգիպտական պատկերացումների համաձայն իգական է երկինքը՝ Նուտը, իսկ երկիրը՝ Գեբը, արական է: Եւ սա միակ հակադրութիւնը չէ եգիպտական ու հայկական պատկերացումների միջեւ: Աւելի մանրամասն այս մասին տե՛ս **Գ.Բ. Բրուտեան**, Օրացոյց Հայոց, էջ 172:

20 Տե՛ս **Գ.Բ. Բրուտեան**, Յովհաննէս Սարկաւագի Խառնախորանում առկայ օրացուցային որոշ մակաչափերի մասին. Բ. «Էջմիածին», 2007, Ը, էջ 65 – 76:

եւ այդ «սեւ ջրի» վերսփին աշխարհ գալը պարզապէս պիտի նշանակի նախագոյ քաոսի վերադարձ, այսինքն՝ կարգաւորուած աշխարհի կործանում: Դաւթի եւ Մելիքի կռուի այս մանրամասները որոշակի ցուցանում են, որ Դաւթի այս գործողութիւնը նոյն տիեզերասփեղծ վիշապամարտն է: Տեղին է յաւելել նաեւ, որ Դաւիթի այս կռուի ուղեկցող ձայները յատուկ են ամպրոպային աստուածութեանը: Դիցավէպում սա ամենացայտուն դէպքն է, երբ յատուկ շեշտում են մենամարտի զարկերին ուղեկցող ձայները, երկրի ցնցումները: Աւելին՝ Դաւիթի զէնքը՝ **կայծակնային** թուրը, իր անունով արդէն յուշում է, որ պիտի գործ ունենանք կայծակի, ուրեմն նաեւ՝ դրան ուղեկցող միակ բնական ձայնի՝ **որոտմունքի** հետ: Այսինքն, սա եւս ցուցանում է, որ ի դէմս Դաւիթի ունենք ամպրոպային վիշապամարտիկ աստուածութիւն եւ նրա ու Մելիքի կռիւն էլ արտայայտութիւնն է տիեզերասփեղծ վիշապամարտի:

Թերեւս Ամանորի եւ վիշապամարտի **պատճառական** կապի ամենալրիւ ու խորը բացայայտման օրինակ է հէքեաթների սկզբնամասի համարեա պարտադիր դրուագը, որին այլ առիթով արդէն անդրադարձել ենք[21]:

Պատմութեան սկզբնամասում մի վիշապ շուրջանակի պատում է տղայի գտնուելու վայրը եւ արգելում նրա (եւ իր հետիններին) ելքը այդ փակ շրջանից: Շատ կարեւոր է, որ այս վիշապը էապէս տարբերւում է միւս բոլոր վիշապներից. նա անհոգելի է: Նա ինքը տղային ասում է, թէ իր դէմ անզօր են թէ՛ տղան ինքը, եւ թէ՛ տղայի զէնքը: Տղայի զէնքը, ընդհանրապէս, թուրն է: Ընդ որում, սա համարեա ամենազօր թուր է.(որոշ տարբերակներում (եւ ի մասնաւորի՝Սասնայ Ծռերում) սա հէնց կայծակնային թուր է: Յիշենք, որ այս պատմութեան որոշ տարբերակներում տղան իր թրով միջից կիսում է ջրարգել վիշապին, այդ նոյն թրով կտրատում է արծուի ճտերին ուտելու եկած վիշապին: Այսինքն, վիշապների վրայ այս զէնքը շատ լաւ գործում է, եւ տղան մեծ յաջողութեամբ կարողանում է կռուել վիշապների հետ եւ յաղթել–վերացնել դրանց: Ուրեմն, խնդիրն այստեղ ոչ թէ տղան ու իր զէնքն են, այլ տուեալ վիշապը: Հետեւաբար, իրօք, այս վիշապը էապէս տարբերւում է միւս վիշապներից: Այս վիշապը շուրջանակի պատել է ինչ-որ տարածք, որտեղ ելումուտ անելն անկարելի է առանց իր թողտուութեան: (Հերոսներն այդտեղ յայտնուել էին գիշերը մոլորուելով կամ խախտելով կանխաւ դրուած արգելքը:) Այս վիշապի՝ միւսներից ունեցած մի ուշագրաւ տարբերութիւնն էլ այն է, որ սրա գլուխն ու պոչը կպած են իրար, այսինքն, իրար են բերուած (իրար են հաւասարեցուած, նոյնացուած) սկիզբն ու վերջը: Իսկ դա յուշում է, որ սա պէտք է նշանակի մի պարբերական երեւոյթ, **պարբերական իրադարձութիւն**: Այս վիշապի դիւթանքը վերանում է (նրա կաշին պատռում է, միջից դուրս է գալիս մի աղջիկ) Սինամ թագաւորի գաղտնիքն իմանալով: Իսկ Սինամի գաղտնիքը, ինչպէս տեսանք, հէնց տարեշրջանի գաղտնիքն է: Եւ **տարեշրջանն** էլ տիեզերական պատկերացումների մէջ **հիմնական պարբերական իրադարձութիւնն** է: Սա հիմք է տալիս համարելու, որ այս՝ շուրջանակի փաթաթուած վիշապը հէնց տարեշրջան է: Եւ նրա այդպիսին լինելն է պատճառը, որ նրա վրայ ոչ մի զէնք չի գործում, նրա փակած շրջանից ներս ու դուրս անել կարելի չէ: Տարեշրջանը մարդուց անկախ պարբերական իրադարձութիւն է: Եւ այդ շրջանը մտնել ու դրանից դուրս գալ հնարաւոր է միայն տարեմուտին (նոյնն է թէ՝ տարեվերջին): Եւ սա էլ, իր հերթին, յուշում է, որ

21 Տե՛ս շարքիս առաջին յօդուածը. **Գ.Բ. Բրուտեան.** «Էջմիածին», 2008, Բ, էջ 49 – 66:

այս վիշապի մօտից տղայի գնալուց մինչեւ վերադարձը տեղի ունեցած իրադարձութիւնները տեղի են ունենում Տարեմուտին, կամ աւելի որոշակի՝ Տարեմուտի կախարդական գիշերը, այդ գիշերուայ այն պահին, երբ ըստ հայկական ժողովրդական հաւատալիքի ժամանակը կանգ է առնում:

Միւս կողմից այս վիշապի կաշին պատռելը եւ միջից աղջիկ դուրս գալը ըստ էութեան նշանակում է վիշապի վերանալ – պարտուել: Այսինքն, **տարեշրջանի գաղտնիքը գտնել – բերելը**, որով յաղթում, մասնատւում, ի վերջոյ՝ վերանում է այս անսովոր վիշապը, ըստ էութեան **վիշապամարտ** է (շարադրուած, ձեւակերպուած միւս վիշապամարտերից տարբեր կերպով): Ի տարբերութիւն միւս վիշապամարտերի, ա՛յս մէկը արւում է ոչ սովորական գէնքով (հէնց դա էլ ամենասկզբում տղային ասում է վիշապը): Այս վիշապին յաղթող գէնքը տիեզերական կարգի մասին գաղտնիքն է՝ **տարեշրջանի գաղտնիքը**: Իր այս բացառիկութեամբ սոյն վիշապամարտը զուգահեռ է տիեզերաստեղծ վիշապամարտին (օրինակ՝ Մարդուկի եւ Տիամատի կռիւը, որի արդիւնքը Տիամատի մարմնից երկրի եւ երկնքի, այսինքն՝ կարգաւորուած աշխարհի ստեղծումն է): Այս վիշապամարտի արդիւնքը վիշապի մարմնից կարգաւորուած աշխարհի իրողութեան ստեղծումն է (սիրուն աղջիկ – հարսնացու) եւ տղայի **ամուսնութեան արտօնումը**: Այս կերպ հասկանալի է դառնում նաեւ վիշապամարտի առընչութիւնը տարեմուտի հետ: Տարեմուտին աւարտուած է հին ժամանակը, այսինքն՝ վերացած է հին աշխարհը, եւ պիտի սկսուի նոր ժամանակը, այսինքն՝ պիտի կառուցուի նոր աշխարհը: Ուրեմն, պիտի կատարուի ամբողջ աշխարհաստեղծ գործողութիւնը: Եւ, ըստ այսմ, տարեմուտի ծէսերի մէջ առկայ վիշապամարտի տարրերը խորհրդանշական կրկնութիւնը, խորհրդանշական կատարումն են առաջնային տիեզերաստեղծ վիշապամարտի:

Կարեւոր է նաեւ, որ այս վիշապամարտի արդիւնքը լինում է **ամուսնութեան արտօնումը**: Ամուսնութիւնը այն հիմնական բարձրագոյն նպատակն է, որին ձգտում են հէքեաթների հերոսները, եւ **նրանց բոլոր սխրանքները տարբեր աշխարհներում ըստ էութեան կատարւում են հէնց ամուսնութեան իրաւունք ստանալու նպատակով**: Հէքեաթի սկզբնամասի՝ շուրջանակի պատող վիշապի մօտից տղայի մեկնումից սկսեալ մինչեւ նրա յաղթական վերադարձը բոլոր գործողութիւնները կատարւում են այս վիշապից ամուսնութեան իրաւունք ստանալու համար: Ըստ էութեան սա սերնդագործութեան իրաւունքն է, այսինքն՝ ժամանակի մէջ յարատեւելու–անմահանալու իրաւունքը: Ուրեմն, այստեղ ունենք կեանքի շարունակութեան իրաւունքի ստացում: Միւս կողմից՝ կեանքի շարունակման–յարատեւման ապահովումը իր էութեամբ առաւել մօտ է այդ նոյն կեանքի սկզբնաւորմանը, այսինքն՝ Արարչութեանը: Ուստի, բնական է, որ կեանքի, յարատեւութեան, սերնդագործութեան իրաւունքի ստացումը կապուի հէնց Արարչութեան (որը այդ կեանքի սկզբնաւորումն է) տօնի հետ:

Տարեմուտի եւ տիեզերաստեղծ վիշապամարտի կապի մի այլ օրինակ է հետեւեալը:

Հէքեաթի որոշ տարբերակներում աղջկան վիշապի մօտ (իբրեւ ջրի համար տուրք) տանելիս քաղաքի բնակիչները աղջկայ հետ միասին վիշապի համար տանում են մէկական աման փլաւ ու գառան խորոված[22]: Սա ակնյայտօրէն յիշեցնում է Հայոց Նաւասարդի՝ Ամանորի ծիսական կերակուրը՝ հարիսան, որի բաղադրիչներն են նոր բերքի հացահատիկն ու զոհաբերուած կենդանու (անպայման՝ եղջերաւոր կենդանու) միսը: Ըստ բաղադրիչների,

22 ՀԺՀ, հ. 3, էջ 80 – 94, եւ 274 – 282:

ուրեմն՝ նաեւ ըստ իրենց ունեցած ծիսական խորհուրդի, սրանք նոյնն են[23]: Փաստօրէն, այս վիշապամարտի հետ կապուած կերակուրն ըստ իր բաղադրիչների, ուրեմն եւ՝ ըստ իր կրած խորհուրդի, նոյնական է Ամանորի ծիսական կերակուրի հետ: Սա եւս ցուցում է առ այն, որ այս վիշապամարտը կապուած է Ամանորին, տեղի է ունենում հէնց տարեմուտին[24]:

Ամանորի եւ (տիեզերաստեղծ) վիշապամարտի սերտ առնչութեան մի օրինակ էլ մինչեւ մեր օրերը տարբեր ազգերի մէջ պահպանուած՝ Ամանորին կատարուող հրավառութեան, հրացանաձգութեան եւ այլ մեծաձայն գործողութիւնների սովորութիւնն է: Անշուշտ, ներկայումս Ամանորի գիշերուայ կարեւորագոյն պահին կատարուող այդ ձայնային գործողութիւնները տարբեր վայրերում ունեն տարբեր տեղային բացատրութիւններ: Դրանք բոլորը մէկ առ մէկ քննելը դուրս է մեր նպատակներից, սակայն մեր խնդրի համար էական է դրանց բոլորի ընդհանուր մասը: Այդ կարգի բոլոր գործողութիւնները կատարւում են **Ամանորի գիշերը**՝ այն պահին, երբ աւարտւում է հին տարին եւ սկսւում է նորը: Այդ բոլոր գործողութիւնները, ըստ էութեան, հանգում են **որոտմունքի** ձայնին նմանուող ձայներ հանելուն, գործողութիւնները շատ յաճախ կատարւում են **զէնքով** (ներկայումս՝ հրազէնով) եւ, որպէս կանոն, այդ գործողութիւնների կատարողը լինում է **տղամարդ**: Այսինքն, ունենք տղամարդու (արական ասպուածութեան) կողմից յատուկ զէնքով (կայծակնային թրով) կատարուող գիշերային գործողութիւններ, որ ուղեկցւում են որոտմունքի ձայներով (բնական է, որ եթէ թուրը **կայծակնային** է, ապա նրա գործադրութեան ձայնն էլ միայն **որոտմունքը** կարող է լինել): Այս ընդհանուր յատկանիշներով Ամանորի գիշերուայ այս ժողովրդական սովորութիւնները կարող են դիտուել իբրեւ մերօրեայ վերապրուկը արական գերագոյն աստուածութեան մղած յաղթական տիեզերաստեղծ վշապամարտը ներկայացնող, խորհրդանշաբար կրկնող հնագոյն ծիսական հմայական գործողութիւնների: Այս նոյն հրացանաձգութիւնը ներկայումս առկայ է եւ Հայոց հարսանեաց ծէսի մէջ: Եւ սա բնական է, զի, ինչպէս գիտենք, հարսանեաց ծէսը մասն է եղել Հայոց Նաւասարդեան տօնակատարութեան, այսինքն՝ Ամանորի տօնաշարքի[25]: Այսինքն, սա եւս նոյն Ամանորի հրացանաձգութեան մի դրսեւորումն է:

Տարեմուտի եւ վիշապամարտի կապի մի այլ օրինակ ունենք հին Հռոմէական օրացոյցի մէջ: Ինչպէս այլ առիթով նկատուել է, Հռոմէական օրացոյցի մեզ յայտնի հնագոյն տարբերակը էական ընդհանրութիւն ունի Հայոց հնագոյն Նախահայկեան օրացոյցի հետ[26]: Ահա, Հռոմէական հին օրացոյցում տարուայ առաջին ամիսը կոչուել է Martius mensis եւ ձօնուած է եղել Մարս աստուածին: Մարսը, ինչպէս յայտնի է, եղել է նախ եւ առաջ ռազմի աստուած, եւ նրա անունն իսկ կապուած է հայերէն «մարտ»–կռիւ, պայքար բառի հետ (ծագում են միեւնոյն արմատից)[27]: Միւս կողմից՝ հռոմէական Մարսի հայկական զուգահեռը Վահագնն

23 Չի բացառւում, որ այս հէքեաթում վկայուած փլաւն ու գառան խորովածը եղած լինեն Ամանորի ծիսական կերակուրի աւելի նախնական տարբերակը՝ նկատի ունենալով, որ խորովածի պատրաստումը աւելի պարզ է, քան հարիսայինը, եւ յատուկ պայմաններ չի պահանջում:

24 Կան հէքեաթի տարբերակներ, որ այս նոյն դրուագում քաղաքի բնակիչները վիշապին ընծայ են տանում գաթայ: Սա եւս ցուցանում է այս վիշապամարտի կապը Ամանորի հետ, քանի որ ունենք բազմաթիւ ազգագրական վկայութիւններ առ այն, որ Հայոց մէջ սովորութիւն է եղել Ամանորին աղբիւրներին տարբեր տեսակի հացեր եւ, ի մասնաւորի՝ գաթայ ընծայելու. տե՛ս **Եփրեմ վ. Պօղոսեան,** Նոր Տարւոյ տօնը հին եւ նոր Հայոց քով, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1952:

25 Տե՛ս **Գ-ր. Բրուտեան,** Օրացոյց Հայոց, էջ 340 – 348:

26 Տե՛ս, օրինակ, **Գ-ր. Բրուտեան**, Օրացոյց Հայոց, էջ 399 – 415:

27 **Հր. Աճառեան,** Հայերէն արմատական բառարան, հ. Գ, էջ 289, Երեւանի համալսարանի հրատ., Եր., 1977:

է, կամ Արան, որոնք երկուսն էլ սերտ առընչում են վիշապամարտին: Այսինքն, հայկականին շատ մոտ հռոմէական օրացուցային իրականութեան մէջ եւս ունենք, որ տարեմուտը կապուած է հէնց մարտի, վիշապամարտի հետ:

Տարեմուտի – Ամանորի ինչի տօն լինելը հասկանալուց յետոյ կարեւոր է փորձել հասկանալ նաեւ, թէ ինչ է ըստ էութեան մեր հէքեաթների ջրարգել վիշապը, որի հետ յաղթական մարտը հէնց Ամանորի գլխաւոր գործողութիւնն է:

Հէքեաթի տարբերակների մեծ մասում ունենք, որ այս վիշապը դուրս է գալիս աղբիւրի ակից: Այսինքն, նա «բնակւում է» հէնց այդ աղբիւրի ակի մէջ: Իսկ աղբիւրի ակի մէջ, ընդհանրապէս, ջուրն է, եւ աղբիւրի ակից հէնց ջուրն է, որ դուրս է գալիս: Սա մտածել է տալիս, **որ այս վիշապը հէնց ինքը ջուրն է**: Վիշապի այսպիսի ընկալման օգտին է վկայում նաեւ այն, որ շումեր-աքքադական դիցաբանութեան մէջ Մարդուկի ախոյեան Տիամատ վիշապի անունը կապուած է «**ծով**» նշանակութեան հետ, եւ այդ վիշապն ինքը մարմնաւորումն է նախասկզբնական տարերքի[28]:

Նկար 1.
Վիշապը ըստ հայկական ժայռապատկերի

Նկար 2.
Վիշապի պատկեր Ն. Ք. 32-30դդ. Քրեղանի վրայ (Շիրակ)

Նկար 3.
Զոյգ վիշապների ժայռապատկեր, Սեւ Սար

Այս նոյնն է ցուցանում նաեւ այս վիշապի արիւնով փղայի թիկունքին նշան դնելը, որ անում է աղջիկը վիշապամարտի յաղթական աւարտից յետոյ:

Վիշապի արիւնով փղայի թիկունքին նշան դնելը, որ անում է աղջիկը, բազմաթիւ զուգահեռներ ունի տարբեր դիցաբանութիւնների մէջ: Սրա լաւ յայտնի մի օրինակ է յունական դիցաբանութեան մէջ սրբազան Ստիքս գետի ջրերի մէջ Աքիլլէսին թաթախելը, որ անում է նրա մայրը՝ Թետիս[29] դիցուհին՝ իր որդուն անխոցելի դարձնելու համար: Վիշապը, ինչպէս տեսանք, ջրի ակից էր դուրս եկել եւ ինքը հէնց

28 Տե՛ս "Мифы народов мира", т. 2, էջ 505:

29 Ի դէպ, այս դիցուհին եւս կապուած է ջրի հետ. նա ծովային աստուած Ներէոսի դուստրն է. տե՛ս, օրինակ, "Мифы народов мира", т. 2, էջ 561. Իր մօր այսպիսի (ծովային) էութեամբ Աքիլլէսը, ըստ էութեան, ջրից ծնուած հերոս է, եւ, իբրեւ այդպիսին, նոյնանում է Սասնայ երկուորեակ ջրածին եղբայրների (նրանցից առաջի՝Սանասարի) հետ: Այսինքն, յունական դիցաբանութեան այս դրուագի եւ Սասնայ Ծռերի միջեւ զուգահեռները շատ աւելի են, քան առաջին հայեացքից կարող է երեւալ (Աքիլլէս–Պատրոկլէս զոյգը ունի երկուորեակութեան յստակ յատկանիշներ):

Նկար 4.
Հապուած հայկական վիշապագորգից

ջուր էր: Հետեւաբար, նրա արիւնը եւս պիտի հէնց ջուր լինի: Եւ, ըստ այսմ, վիշապի արիւնով ներկուելը նշանակում է պարզապէս այդ աղբիւրի ջրով օծուել: Այսինքն, աղջիկը փղային օծում է սրբազան աղբիւրի ջրով: Սա ըստ էութեան նոյնն է, ինչ Սասնայ հերոսների՝ կաթնաղբիւրի մէջ լողանալը, որով նրանք գերբնական զօրութիւն են ստանում: Ի դէպ, այս գործողութիւնը դիցավէպի բազմաթիւ պատումներում նախորդում է վճռական մենամարտին, որ, փաստօրէն, զուգահեռն է տիեզերաստեղծ վիշապամարտի: Յունական դիցաբանութեան մէջ Տիտիքսը սահմանային գետ է Անդրաշխարհի եւ մեր աշխարհի միջեւ: Նոյն կերպ էլ այս ջրարգել վիշապն ունի սահմանային բնոյթ. նա հանդէս է գալիս Տարեմուտին՝ հին եւ նոր տարիների սահմանին: (Ի դէպ, սրա հետ համադրելի է քրիստոնէութեան մէջ առկայ՝ մարդուն ջրի մէջ ընկղմելով մկրտելու ծէսը):

Նկար 5.
Վիշապի նշանակը անկիւնաւոր ալիքի տեսքով՝ վիշապակոթողի վրայ. Սարդարապատ. Ազգագրութեան թանգարան

Այս՝ ամենակարեւոր ջրարգել վիշապը իբրեւ ջուր ընկալելու օգտին են վկայում նաեւ հայկական հնագոյն պատկերագրութեան մէջ վիշապի պատկերման որոշ առանձնայատկութիւններ:

Սկսեալ Հայաստանով մէկ սփռուած ժայռապատկերներից, Հայաստանում գտնուած բրոնզիդարեան տարբեր իրերի զարդապատկերներից մինչեւ ուշ միջնադարեան (եւ մասամբ նաեւ՝ մերօրեայ) հայկական գորգերի զարդանկարները պարունակում են վիշապի, այսպէս կոչուած՝ «ոճաւորուած», «երկրաչափական» պատկերներ (տե՛ս 1, 2, 3, 4 նկարները):

Այս պատկերների մէջ առանձնայատուկ է հետեւեալը. վիշապը պատկերւում է միշտ բեկեալ կամ ալիքաւոր գծի միջոցով, ընդ որում, շատ յաճախ այդ գիծը կամ դրա որոշ հատուածը լինում է կրկնակի: Յատկանշական է, որ վիշապի այսպիսի (բեկեալ գծի կամ անկիւնաւոր ալիքի տեսքով) նշանակը առկայ է նաեւ որոշ վիշապակոթողների վրայ. այդպիսի վիշապակոթողի մի նմոյշ այսօր կանգնեցուած է Սարդարապատում՝ ազգագրութեան թանգարանի մուտքի մօտ (տե՛ս նկար 5): Այս ալիքաւոր (կամ բեկեալ) գիծը արդէն իսկ յիշեցնում է հոսող ջրի պատկերը, իսկ կրկնակի ալիքը պարզապէս **Ջրհոս** կենդանակերպի նշանն է՝ Վերջինիս աղերսը ջրի հետ յատուկ հիմնաւորման կարիք չունի: Այսինքն, ի դէմս այս իւրայատուկ վիշապի հնագոյն (կանոնականացած) պատկերագրութեան մենք ունենք այսօր բոլորիս քաջ յայտնի՝ Ջրհոս կենդանակերպի պատկերումը:

Միւս կողմից, Ջրհոս կենդանակերպի պատկերագրութեան հնագոյն (շումերական) նմոյշներում մենք ունենք պարզապէս ապտուածային էակից՝ Էնկի (կամ Էա) ապտծու ուսերից սկիզբ առնող **երկու գետեր** կամ **աղբիւրներ** (տե՛ս նկար 6): Ի դէպ, մեզ է հասել Մարդուկի պատկերը Տիամատի հետ (ըստ բաբէլական կնիքի), ուր և՛ Մարդուկը, և՛ Տիամատը պատկերուած են ջրերի վրայ, և այստեղ եւս ջրի նշանակը իրար զուգահեռ ալիքաւոր գծերն են (տե՛ս նկար 7):

Նկար 6.
Ջրերի ապտուած Էնկին (Էան) ըստ շումերական կնիքի (աջից առաջինը)

Ստացւում է, որ մեր վիշապի հնագոյն պատկերը պարզապէս Ջրհոսի – ջրի պատկերումն է: Եւ սա եւս հաստատում է, որ **ի դէմս այս վիշապի ունենք ջուրը** (աղբիւրը, աղբիւրի ակը, գետը եւն) եւ յատկապէս՝ **հոսող ջուրը**:

Այս նոյնի մի այլ արտայայտութիւն է քաջ յայտնի այն իրողութիւնը, որ Հայաստանում յայտնի բազմաթիւ վիշապակոթողները տեղադրուած են եղել աղբիւրների, առուների, արհեստական ջրամբարների եւ ջրի, ոռոգման հետ աղերսուած այլ առարկաների մօտ[30]:

Նկար 7.
Մարդուկը՝ Տիամատ վիշապի հետ

Այսպիսով, սպանում ենք, որ **և՛ ըստ հէքեաթների վերլուծութեան, և՛ ըստ պատկերագրութեան՝ տարեմուտի – Ամանորի հետ կապուած ջրարգել վիշապը պարզապէս ջրի (ի մասնաւորի՝ հոսող ջրի) դիցաբանական կերպաւորումն է, այսինքն՝ հէնց ջուրն է:**

Այսպիսով, պարզեցինք, որ ըստ մեր քննարկած հէքեաթների՝ Տարեմուտը արարչութեան տօն է, եւ այդ հէքեաթների ջրարգել վիշապն, ըստ էութեան, հէնց ջուրն է:

Օրացուցային առումով կարեւոր է հասկանալ նաեւ, թէ ինչ է նշանակում գղայի անցումը այն դռնով, որի երկու կողմերում պահակութիւն են անում **ցուլն** ու **առիւծը**՝ իրենց առջեւ հակառակ համապատասխանութեամբ դրուած կերերով (առիւծի դիմաց՝ խոտ, ցուլի դիմաց՝ միս): Սրա հետ սերտ շաղկապուած է եւ գղայի կապարած՝ կերերի տեղերի փոփոխումը եւ դրա շնորհիւ անարգել անցումը այդ դռնով ներս ու դուրս:

30 **Մ. Արեղեան,** «Վիշապներ» կոչուած կոթողներն իբրեւ Ասպղիկ–Դերկեթոյ դիցուհու արձաններ. Երկեր, հ. Է, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1975, էջ 107: Սա վերաբերում է վիշապակոթողների նախնական տեղադրմանը միայն. ցաւօք, ներկայումս բազմաթիւ վիշապակոթողներ տեղահանուած եւ տեղակայուած են իրենց նախնական տեղի հետ կապ չունեցող քաղաքային միջավայրում:

Այն, որ Յուլից Առիւծ անցումը ունեցել է բացառիկ կարեւորութիւն, ունի բազում վկայութիւններ՝ մեզ հասած տարբեր ժամանակներից: Ձանց առնելով այդ բոլոր վկայութիւնների առանձին քննութիւնը, նայենք միայն մի երկու օրինակ: Մեզ են հասել Վանի Արարատեան թագաւորութեան ժամանակուայ արքայական գահի ուշագրաւ մասեր, որոնք ամեն ինչից զատ ունեն նաեւ մեր խնդրին վերաբերող կարեւոր իմաստ: Խօսքը Յուլի եւ Առիւծի ծաւալային քանդակների մասին է՝ գտնուած Թ-ովրակ Կալէից[31] (նկար 8): Ըստ հեւրազօտողների՝ սրանք եղել են գահի աջ ու ձախ կողմերի տարրեր (Ռ. Պիոտրովսկին ենթադրում է, նոյնիսկ, որ սրանք եղել են տարբեր գահերի տարրեր): Այս արձան(իկ)ները երկուսն էլ թեւաւոր են, որ ցուցանում է դրանց՝ երկնային էակներ կերպաւորած լինելը: Առիւծը պատկերուած է կանգնած, ուղիղ դէպի առաջ նայող գլխով, իսկ ցուլը պատկերուած է նստած, գլուխը դէպի աջ շրջած: Բնական է, որ այս կենդանու գլուխը շրջուած պիտի լինի դէպի գահի վրայ բազմած անձը, այսինքն, այդ կենդանին պիտի եղած լինի գահի աջ կողմում (եթէ նայում ենք դիմացից): Ստացւում է, որ այս գահի աջ կողմում ցուլն է, իսկ ձախ կողմում՝ առիւծը: Սա լիովին ներդաշնակ է Նախահայկեան օրացոյցի հետ կապուած պատկերացումներին, որոնց համաձայն Կենդանաշրջանի Յուլ–Առիւծ հատուածը դիտուել է իբրեւ Դուռ, որով անցում է կատարուել մի աշխարհից միւսը[32]: Եւ անցնողը ինքը՝ Հայր Աստուածն է եղել: Երկրի վրայ Հայր Աստուծոյ փոխարէն թագաւորն է, որ ունի նոյն դերը: Ուրեմն, արքան ինքը նստել է ցուլի եւ առիւծի միջեւ՝ իբրեւ Հայր Աստուած, որ անցնում է Մութ աշխարհից Լոյս աշխարհ: Եւ, խորհրդանշական առումով էլ ցուլի նստած եւ առիւծի կանգնած լինելը ներդաշնակ է



Նկար 8.
Վանի մօտ գտնուած թեւաւոր առիւծի եւ ցուլի արձանները

Նկար 9.
Քրիստոսը գահի վրայ. Յովհաննէս Կարապետի վանք, Մբ. Աստուածածին եկեղեցի, 1301թ. (Մարգիս վարդապետ)

31 Տե՛ս **Boris B. Piotrovsky**, The Ancient Civilization of Urartu, Cowles Book company, New York, Nagel Publishers, Geneva, 1969, pp. 17 – 18, pl. 101,102.

32 Աստղալից երկնքում եւս այս կենդանիները (կենդանակերպերը) դասաւորուած են այնպէս, որ երկնքին նայողը տեսնում է Ցուլը աջ կողմում, իսկ Առիւծը ձախում:

նրան, որ Ցուլում Հայկը (Հայր Աստուածը) մեռել է (մտել է Անդրաշխարհ (նստած, գետնին կպած) եւ Առիւծում յառնել է, կանգնել է (ելել է Լոյս աշխարհ): Եթէ նայենք այս կերպարներին գահին նստողի դիրքից, ապա **ցուլը** լինում է նրա **ձախ** կողմում, իսկ **առիւծը՝ աջ**: Սա եւս համահունչ է նրան, որ Ցուլում եղել է պաշտուող էակի մահը (ձախ կողմ), իսկ Առիւծում եղել է նրա յառնումը (աջ կողմ):

Այս նոյն գահի մի տարբերակն ունենք Յովհաննէս Կարապետի վանքի Սպիտակաւոր Ս. Աստուածածին եկեղեցու արեւմտեան մուտքի վերեւի յայտնի բարձրարուեստ հարթաքանդակին (գործ՝ Սարգիս վարդապետի, նկար 9): Այստեղ պատկերուած է Քրիստոսը գահին բազմած եւ այդ գահի երկու կողմերում բազկակալների սիւների դիմերեսներին ունենք չորս կենդանիների պատկերներ. աջ կողմում՝ ներքեւում ցուլ, վերեւում՝ արծիւ[33], ձախում՝ վարը առիւծ, վերը՝ մարդ[34]: Ըստ էութեան ունենք նոյն Արարատեան թագաւորութեան ժամանակների գահի փոքր-ինչ այլ տարբերակը: Երկուսում էլ գահին բազմողը աստուած է (մի դէպքում՝ Քրիստոս, միւս դէպքում՝ թագաւոր, որի անձը, անշուշտ, պիտի աստուածացուած լինէր՝ ժամանակի պատկերացումներին ներդաշնակ[35]): Աւելացնենք, որ ի տարբերութիւն հայ միջնադարեան պատկերագրական աւանդոյթի բազմաթիւ դրսեւորումների, ա՛յս հարթաքանդակում Քրիստոսի լուսապսակի ներսում պարզորոշ պատկերուած են աւանդական արքայական թագի եռանկիւն ելուստներ: Այսինքն, այստեղ ունենք Քրիստոսի պատկերը հէնց **արքայական թագով**: Երկու գահերի կողմնային սիւների դիմերեսներին պատկերուած են կենդանիներ. աջ կողմում՝ ցուլ, ձախում՝ առիւծ: Միակ «տարբերութիւնը» ցուլից ու առիւծից զատ արծուի եւ մարդու պատկերների չգոյութիւնն է Վանի գահի արձանների մէջ: Սակայն այս «տարբերութիւնը» առաւել թուացեալ է, քան իրական: Նախ, չի բացառում, որ այդպիսի պատկերներ (քանդակներ) նախապէս եղած լինեն եւ ապա կորած ու մեզ չհասած: Եւ, եթէ նոյնիսկ այդ գահը նախապէս եղած լինի միայն ցուլով ու առիւծով, դա եւս չի խանգարում այս երկու գահերը դիտելու իբրեւ պատկերագրական միեւնոյն աւանդոյթի տարբեր ժամանակների դրսեւորումներ:

Արդ դառնանք տղայի անցմանը ցուլի եւ առիւծի պահպանած այս դռնով:

Ինչպէս շարքիս նախորդ յօդուածներում տարբեր առիթներով նշուել էր, մեր խնդրոյ առարկայ հէքեաթների հերոս տղան արեգակնային հերոս է, եւ տարբեր աշխարհներով նրա ուղեւորութիւնն ըստ էութեան Արեգակի անցումն է ամբողջ երկնակամարով: Բնական է, ուրեմն, որ այս դռնով տղայի անցումը պիտի համապատասխանի Արեգակի տարեկան

33 Ցաւօք, ներկայումս քանդակի այս մասը կորուած է եւ քանդակից չի երեւում սրա ինչ լինելը, սակայն, ելնելով նմանատիպ պատկերների կանոնական կառուցուածքից, անկասկած է, որ այս տեղում պիտի եղած լինի հէնց արծուի պատկեր: Տե՛ս նաեւ յաջորդ ծանօթագրութիւնը:

34 Անշուշտ, այստեղ ունենք չորս աւետարանիչների խորհրդանիշ կենդանիների պատկերումը, որ շատ տարածուած է հայ միջնադարեան պատկերագրութեան մէջ: Սակայն նկատենք, առաջին, որ այսպիսի պատկերագրութեան աւանդոյթը էապէս աւելի հին է, քան քրիստոնէական աւանդոյթը. դրա ակունքները ունենք տակաւին Եզեկիէլի մարգարէութեան մէջ, ուր առկայ են այս նոյն չորս կենդանիները (Եզեկ. Ա, 4 – 10): Երկրորդ, որ հակասութիւն չկայ Արարատեան թագաւորութեան ժամանակուայ (նախաքրիստոնէական) գահի պատկերների, Եզեկիէլի տուածի, Ս. Կարապետի բարձրաքանդակի եւ հայ պատկերագրութեան մէջ լայնօրէն տարածուած՝ չորս աւետարանիչների խորհրդանիշ կենդանիների պատկերման աւանդոյթի միջեւ: Այս բոլորը կարելի է դիտել իբրեւ մէկ ընդհանուր նախնական փիլիսոփայական պատկերացման տարբեր դրսեւորումներ՝ մեզ հասած տարբեր ժամանակներից, տարբեր կրօնների մտածողութեամբ արտայայտուած:

35 Անշուշտ, չի բացառում, որ այս գահը նախատեսուած լինի ոչ թէ արքայի բազմելու, այլ կրօնական ինչ-ինչ նպատակների համար եւ սրա վրայ բազմողն էլ եղած լինի ինչ-որ աստուած (կուռք):

շարժման մի ինչ-որ հատուածին, կամ այդ մասին եղած պատկերացմանը: Փորձենք հասկանալ, թէ երկնակամարի ո՞ր հատուածին, տարեշրջանի ո՞ր միջակայքին է վերաբերում դա, եւ ինչ են նշանակում հէքեաթների այդ մասում նկարագրուած անցքերը:

Ակնառու է, որ այս բացառիկ դռան պահապան կենդանիները ունեն իրենց կրկնակները կենդանաշրջանի մէջ. այսօր էլ կենդանիշրջանի մէջ յայտնի են **Ցուլ** եւ **Առիւծ** կենդանակերպերը: Արեգակնային հերոսի անցումը ցուլի եւ առիւծի պահպանած դռնով յուշում է, որ այստեղ պիտի ներկայացուած լինի **Արեգակի անցումը Ցուլ եւ Առիւծ կենդանակերպերի միջով**: Ժամանակին այլ առիթով ցոյց է տրուել, որ Հայոց հնագոյն տիեզերական–օրացուցային պատկերացումների համաձայն կենդանաշրջանի Ցուլ–Առիւծ հատուածը դիտուել է իբրեւ **Դուռ**, որով արեգակնային հերոսը անցում է կատարել մի աշխարհից միւսը[36]: Եւ այս Դռնով արեգակնային հերոսի անցմանը (այսինքն՝ **Ցուլ** կենդանակերպից **Առիւծ** կենդանակերպ **Արեգակի** անցմանը) համապատասխանել է Հայկն ասպետական գլխաւոր ասպղի՝ Հայկի աջ ձեռքի դիտելի չլինելու, այսինքն՝ համապատասխան աստուածային էակի Անդրաշխարհում լինելու շրջանը: Նախահայկեան օրացոյցում այս՝ շուրջ երկամսեայ տեւողութեանը համապատասխանել է տարուց դուրս համարուած ժամանակմիջոցը, որ կապուած է եղել Անդրաշխարհի եւ դրան աղերսուող պաշտամունքի հետ:

Եթէ համարենք, թէ հասկանալի է այս իւրայատուկ դռնով հերոսի անցումը (դա համապատասխանում է արեգակնային կերպար հանդիսացող գլխաւոր պաշտուող էակի՝ մի աշխարհից միւսն անցնելուն եւ եւ դառնալուն եւ դրա ասպղի աներեւոյթ դառնալուն եւ ապա վերստին ի յայտ գալուն), ապա տակաւին բացատրութեան կարօտ է մնում այն հարցը, թէ ինչ պիտի նշանակի այդ դռան պահապան կենդանիների առաջ դրուած կերերի հակառակ դասաւորութիւն ունենալը եւ այդ դասաւորութիւնը փոխելը: Փորձենք հասկանալ սա:

Դուռը ընդհանրապէս բաժանող սահմանազատող դեր ունի. դռնով են բաժանւում երկու տարբեր յատկութիւններ ունեցող տարածքներ՝ տան ներսն ու դուրսը, քաղաքի տարածքը եւ դուրսը, տաճարի սուրբ մասն ու մնացեալ անսուրբ աշխարհը եւ այլն: Այսինքն, դուռը ունի սահմանային դեր: Բնական է, ըստ այսմ, որ այդ սահմանը երկու տարբեր տարածքների միջեւ համադրուած լինի **սահմանին՝ երկու տարբեր աշխարհների միջեւ**: Ուրեմն, այս դռան տարբեր կողմերում պիտի լինեն տարբեր աշխարհներ: Սա նաեւ նշանակում է, որ այս դռան տարբեր կողմերում պիտի լինեն տարբեր (իրար հակառակ) դրուածքներ, գործեն տարբեր (իրար հակառակ) օրէնքներ: Արդ, ի մտի ունենալով սա, նկատենք նաեւ մի էական հանգամանք: Ըստ մեր խնդրոյ առարկայ հէքեաթների՝ հակառակ կարգով դասաւորուած կերերը դրուած են դռան պահապան կենդանիների **դիմաց**: Այսինքն, այդ կերերը գտնուում են դռնից դէպի դուրս, դռան դրսի կողմում: Եւ, եթէ դուռը իր պահապան կենդանիներով դիտենք իբրեւ դռնից ներս գտնուող աշխարհի մաս, ապա կը ստացուի, որ կենդանիների կերերը դրուած են այլ (այսինքն՝ հակառակ) աշխարհում: Այսինքն, դռան պահապան կենդանիները եւ դրանց դիմաց դրուած կերերը տարբեր՝ իրար հակառակ աշխարհների իրողութիւններ են եւ, բնականաբար, պիտի ենթարկուեն հակառակ տրամաբանութիւնների: Ըստ այսմ, բնական է, որ իրար հակառակ լինեն մի (դռնից ներսի) աշխարհի կենդանիները եւ միւս (դռնից դրսի) աշխարհում նրանց դիմաց դրուած կերերը: Այս կերպ հասկանալի է դառնում, թէ ինչո՞ւ հակառակ են դասաւորուած կենդանիների կերերը:

36 **Գ.Բ. Բրուտեան,** Օրացոյց Հայոց, էջ 349 – 352 եւ 405 – 407: Այս մասին տե՛ս նաեւ վերը:

Իսկ ինչո՞ւ է տղան փոխում դրանց դասաւորութիւնը, եւ ի՞նչ կերպ է դա օգնում նրան դռնով անցնելիս:

Առաջին հերթին նկատենք, որ այս դրուագը միակն է մեր քննարկած հէքեաթներում, ուր հերոսը միեւնոյն ուղին անցնում է առանց կողմնակի օգնութեան («իր ոտքով») **երկու անգամ**: Ընդ որում, նա անցնում է այդ դռնով առաջին եւ երկրորդ անգամ **հակառակ ուղղութիւններով**. առաջին անգամ՝ դրսից դէպի ներս, երկրորդ անգամ՝ ներսից դէպի դուրս: Բնական է, որ միեւնոյն դռնով հակառակ ուղղութիւններով անցումը պիտի կատարուի հէնց հակառակ օրինաչափութիւններով, հակառակ տրամաբանութեամբ: Նկատի ունենանք, որ դռան պահապան կենդանիների դիմաց կերերի դասաւորութիւնը նախատեսուած է եղել **ներսից դուրս** եկողի անցումը արգելելու համար[37]: Հերոսը, հակառակի փոխելով այդ դասաւորութիւնը, փաստօրէն, փոխում է նաեւ այդ դասաւորութիւնից բխող հետեւանքը: Ընդ սմին, փոխում է նաեւ այդ դռնով ներսից դէպի դուրս անցնելու հնարաւորութիւնը. նախկին դասաւորութեամբ անհնար դարձուած՝ ներսից դէպի դուրս անցումը հնարաւոր է դարձնում կերերի դասաւորութիւնը հակառակի փոխելով: Այս է պատճառը, որ տղան կարողանում է անարգել դուրս գալ այդ դռնով: Սա նման է բանալի – կողպէք յարաբերութեանը: Դռան դրսի ու ներսի կողմերից բանալին կողպէքի մէջ մտցնում է հակառակ ուղղութեամբ: Բանալու այն կողմը, որ դրսից մտցնելիս աջ է, ներսից մտցնելիս պիտի լինի ձախ[38]: Աւելի ընդհանրացնելով, կարելի է այս դրուագը մեկնաբանել հետեւեալ կերպ: Տղան, գալով դրսի աշխարհից, իր աշխարհում դրուած կերերի տեղերը փոխելով, դրանք համապատասխանեցնում է ներսի աշխարհի կենդանիների կարգին, այսինքն իրար է համապատասխանեցնում ներսի ու դրսի աշխարհների կարգերը, կամ, այլ կերպ ասած՝ իրար է համապատասխանեցնում դռան կողպէքն ու բանալին: Եւ սա հնարաւոր է դարձնում այդ դռնով անարգել անցումը:

Ինչպէս վերը նշուեց, առիւծի եւ ցուլի պաշտպանած դռնով արեգակնային հերոս տղայի անցումը աստղագիտական – օրացուցային առումով նշանակում է Արեգակի անցումը Ցուլ կենդանակերպից Առիւծ կենդանակերպ, որին համապատասխանել է դարձեալ արեգակնային հերոսի յատկանիշներ ունեցող Հայկի աստղի չերեւալու շրջանը: Այս դռնով անցնելուց առաջ տղան փոխում է կերերի դասաւորութիւնը՝ իրար համապատասխանեցնելով պահապան կենդանիներն ու դրանց դիմաց դրուած կերերը: Սա նոյնն է, ինչ դռան բանալին ու կողպէքը իրար համապատասխանեցնելը: Փաստօրէն, դռնով անցնելիս տղան բանալի–կողպէք յարաբերութեան նման իրար համապատասխանեցնում–ներդաշնակեցնում է երկու տարբեր աշխարհների կարգերը: Սրանով հնարաւոր է դառնում դուռը բացելը–դռնով անցնելը: Ընդ որում, այդ կարգերը կախուած են նաեւ իր անցման ուղղութիւնից: Բնականաբար, տարբեր ուղղութիւններով դրանք պիտի լինեն տարբեր: Առաջին անգամ

37 Երբ տղան այդ դռնից դուրս պիտի գայ, եւ դռնից ներս գտնուող աշխարհի տէրը հրահանգ է տալիս պահապան կենդանիներին՝ արգելել տղայի անցումը, կենդանիները հրաժարւում են կատարել այդ կարգադրութիւնը՝ պատճառաբանելով, թէ տղան փոխել է կերերի դասաւորութիւնը:

38 Սրա պատճառն այն է, որ կողպէքը դռան նկատմամբ իր դիրքը չի փոխում, եւ բանալին, որպէսզի լիարժէք աշխատի, պէտք է իր դիրքը պահպանի (աջ ու ձախի իմաստով) կողպէքի նկատմամբ: Դռան հակառակ կողմերից մօտեցողը դռան նկատմամբ հակառակ համաչափութիւն ունի. եթէ, օրինակ, դրսից մօտենալիս դռան ծխնին աջ կողմում է, կողպէքը՝ ձախում, ապա նոյն դռանը ներսից մօտենալիս ծխնին կը լինի ձախում, իսկ կողպէքը՝ աջում:

այդ դռնով անցնելիս փղան (Արեգակը) փոխում է եղած դասաւորութիւնը եւ ստեղծում է մի նոր դասաւորութիւն: Ապա, ինչ-որ ժամանակ անց նոյն հերոսը նոյն դռնով հակառակ անցումն է կատարում: Բնականաբար, այս հակառակ անցումը պիտի հանգեցնի իրերի հակառակ դասաւորութեան: Այսինքն, փղայի եւ դառնալուց յետոյ պիտի վերստին ստացուի նախկին դասաւորութիւնը: Միւս կողմից, քանի որ մեր հերոսը նոյն Արեգակն է, ուրեմն, նրա շարժումը երկնքով պիտի կրկնուի: Նշանակում է, մեր հերոսի այս եւ ու առաջ անցումները պիտի կրկնուեն: Ընդ որում, այդ կրկնութիւնները պիտի լինեն փարեկան պարբերութեամբ: Այսինքն, այստեղ ունենք պարբերական իրողութիւն: Ուրեմն, այստեղ պիտի ունենանք փարեկան պարբերութեամբ կրկնուող իրադարձութիւն: Բնական է, որ յաջորդ փարի այս նոյն դռնով առաջին անցման ժամանակ վերստին պիտի լինի պահապան կենդանիների եւ կերերի հակառակ դասաւորութիւն եւ կարիք պիտի լինի այն փոխելու–շրկելու: Օրացուցային առումով սա կարող է նշանակել երկնային լուսատուի շարժումը «երկնքի» միեւնոյն հատուածով առաջ ու եւ, այսինքն՝ իրար հակառակ ուղղութիւններով: Այսպիսի շարժում երկնքում կատարում են միայն մոլորակները:

Նայենք սա աւելի մանրամասն: Հնում մոլորակներ են համարուել Արեգակը, Լուսինը, Փայլածուն (Mercury), Արուսեակը (Venus), Հրատը (Mars), Լուսնթագը (Jupiter) եւ Երեւակը (Saturn): Հնում բաւական ստոյգ յայտնի են եղել սրանց պտտման պարբերութիւնները. միջնադարեան աղբիւրները տալիս են դրանց արժէքները (Արեգակը՝ 1 տարի, Լուսինը՝ 1 ամիս, Փայլածուն՝ 336 օր, Արուսեակը՝ 348 օր, Հրատը՝ 2 տարի, Լուսնթագը՝ 12 տարի եւ Երեւակը՝ 30 տարի[39]): Այս մոլորակներից Արեգակն ու Լուսինը երկնքում շարժում են միայն մի ուղղութեամբ (արեւմուտքից դէպի արեւելք): Եր եւ առաջ շարժումներ կատարում են մնացեալ հինգ մոլորակները: Սակայն դրանք էլ ունեն պտտման տարբեր պարբերութիւններ, որոնցից եւ ոչ մէկը հաւասար չէ մէկ տարուայ: Նկատենք նաեւ, որ Արեգակից ու Լուսնից զատ միւս բոլոր մոլորակները մարմնաւորել են դիցաբանական կերպարներ, որոնք յարմար չեն մեր հերոսի հետ նոյնացուելու համար: Ուրեմն, սրանցից եւ ոչ մէկը չի կարող բաւարարել մեր խնդրին, եւ, ըստ այսմ, հարկ է այս եր եւ առաջ երկնային շարժման համար գտնել մի այլ բացատրութիւն:

Ինչպէս ժամանակին ցոյց էր տրուել, արեգակնային հերոսի յատկանիշներ է ունեցել նաեւ Հայկն (Orion) համապատասխանութեանը համապատասխանող կերպարը, եւ երկնքում Յուլից Առիւծ Արեգակի անցմանը զուգահեռ է դրուած եղել Հայկի ապտղի ֆերեւալու շրջանը, որ ընկալուած պիտի լինի իբրեւ համապատասխան կերպարի Անդրաշխարհ իջնելը: Արդ նայենք, թէ ապտղագիտական առումով ինչ է սա նշանակում: Ապտղի ֆերեւալու շրջանը սկսւում է դրա արեգակնային անկումով: Սա այն դէպքն է, երբ երեւալու շրջանի վերջում ապտղը մի կարճ պահ երեւում է երեկոյեան Արեւի մայրամուտից յետոյ, եւ ապա ինքը եւս մայր է մտնում Արեւի եր եւից: Սա նշանակում է, որ այդ պահին տուեալ ապտղը պիտի լինի Արեւից մի փոքր դէպի արեւելք: Դրա յաջորդ օրը, ի հետեւանք Արեգակի տարեկան շարժմանը արեւմուտքից դէպի արեւելք՝ նոյն ապտղը լինում է Արեւին աւելի մօտ, մի օր անց՝ աւելի մօտ, եւ այսպէս շարունակ: Մինչեւ ապտղը «հասնում» է Արեւին (իրականում, սակայն, Արեգակն է մօտենում եւ հասնում ապտղին): Սրանից յետոյ այդ ապտղը, շարունակելով իր ընթացքը,

39 Այս տուեալները բերուած են ըստ Մաշտոցեան Մատենադարանի թիւ 2001 ձեռագրի (էջ 245 ա):

սկսում է հեռանալ Արեւից, մինչեւ լինում է այնքան հեռու (Արեւից այնքան դէպի արեւմուտք), որ ի վերջոյ, մի օր նա մի կարճ պահով դիտւում է արեւելեան հորիզոնի վրայ արեւածագից շուրջ մի ժամ առաջ եւ ապա աներեւութանում ծագող Արեւի պայծառ լոյսի մէջ: Սա ապրդի արեգակնային ամբարձումն է: Այս երկու իրադարձութիւնների միջեւ ընկած փեռողութիւնը հէնց ապրդի չերեւալու շրջանն է:

Տեսնում ենք, որ այս՝ չերեւալու շրջանի ընթացքում ապրդը, դիտողի համար անտեսանելի լինելով հանդերձ, երկնքի՝ մեզ համար չերեւացող մասում շարժւում է եւ Արեգակի մի կողմից անցնում է նրա միւս կողմը (արեւելեան կողմից անցնում արեւմտեան կողմը): Այսինքն, ունենք Արեգակի նկատմամբ ապրդի դիրքի փոփոխութիւն: Երկրից դիտողի համար դա կարող է ընկալուել իբրեւ ապրդի անցում Արեգակի **ձախ կողմից աջ կողմը**: Այսինքն, այստեղ ունենք Արեգակ–ապրդ համակարգի ներքին համաչափութեան (symmetry) շրջում հակառակի: Սա հէնց այն է, ինչ նկարագրուած է մեր հէքեաթների՝ մեզ հետաքրքրող դրուագում: Հէքեաթում տղան անցնում է դռնով դէպի ներս, մտնում մի այլ աշխարհ, հասնում հրաշք պարտէզին, ապա եր դառնում եւ նոյն դռնով դուրս գալիս իր սովորական աշխարհը: Երկնքում սրան զուգահեռ ունենք, որ (Արեգակը Ցուլում եղած ժամանակ, այսինքն՝ դռան սկզբում, ներս մտնելիս) պաշտուող էակի ապրդը մտնում է հորիզոնի տակ, դառնում է չերեւացող, ապա մի կողմից մօտենում – հասնում է Արեգակին, անցնում նրա հակառակ կողմը եւ, ի վերջոյ, (Արեգակը Առիւծում եղած ժամանակ, այսինքն՝ դռան վերջում, դուրս գալիս) այդ ապրդը դուրս է գալիս հորիզոնի տակից, էլի վերադառնում է Լոյս աշխարհ: Բնական է, որ արեգակնային ամբարձման ժամանակ, երբ ապրդը վերսրին դառնում է երեւացող, Արեգակ–ապրդ զոյգի դասաւորութիւնը հակառակն է արեգակնային անկման ժամանակ եղածի: Եւ սրա արտայայտութիւը հէքեաթում դռան պահապան կենդանիների դիմաց կերերի դասաւորութեան փոփոխումն է, որ կատարում է տղան ներս մտնելիս:

Վերը կատարուած դատողութիւնների եւ տրամաբանական կառուցումների ընթացքում մի քանի անգամ առիթ ունեցանք օգտուելու այն իրողութիւնից, որ կենդանաշրջանի՝ Ցուլից Առիւծ ընդգրկող մի հատուածը հնում համարուել է դուռ, դարպաս, որով անցում է կատարուել մի աշխարհից մի այլ՝ հակառակ յատկանիշներով աշխարհ: Կենդանաշրջանի Ցուլ – Առիւծ հատուածի՝ դռան իմաստ ունենալը մենք ստացել էինք հայկական հնագոյն աստղագիտական, օրացուցային, դիցաբանական պատկերացումների քննութեամբ, համադրմամբ: Սրա հետ մէկտեղ, այլ առիթով այդ նոյն հայկական հնագոյն մշակութային իրողութիւնների վերլուծութիւնից ստացուել էր, որ կենդանշրջանի այդ միեւնոյն՝ Ցուլ–Առիւծ հատուածը կերպաւորել է երկնային մի մեծ վիշապ, որի հետ առընչուել են Արեգակի եւ Լուսնի խաւարումները[40]: Ստացում է, որ ըստ մի հետազօտութեան կենդանաշրջանի Ցուլ–Առիւծ հատուածը հնում Հայոց մէջ համարուել է դուռ, դարպաս, իսկ համարեա միեւնոյն ոլորտի տուեալների վրայ հիմնուած մի այլ հետազօտութեան համաձայն կենդանաշրջանի միեւնոյն՝ Ցուլ – Առիւծ հատուածը համարուել է երկնային վիշապ: Առաջին հայեացքից այստեղ ունենք հակասութիւն. միեւնոյն համաստեղութիւնների խումբը մի դէպքում համարուել է դուռ, միւս դէպքում՝ վիշապ: Ո՞րն է սրանցից ճիշդ, ո՞րն է սխալ:

40 Տե՛ս **Գ.Բ. Բրուտեան,** Երկնային վիշապի մասին պատկերացումները հին Հայոց տիեզերաբանական համակարգում. «Էջմիածին», 2009, Գ, էջ 98 – 114:

Նայենք սա փոքր-ինչ աւելի մանրամասն:

Դուռը, ինչպէս վերը նշուեց, ըստ էութեան ունի սահմանի իմաստ: Դռնով իրարից բաժանւում, սահմանազատւում են տարբեր (յաճախ՝ հակառակ) յատկանիշներ ունեցող տարածքներ (ուրեմն եւ՝ աշխարհներ): Դռան այս էական յատկանիշով պիտի պայմանաւորուած լինի եւ այն, որ դռան չորս կողմերն ունեն յատուկ կարեւորութիւն: Գիտենք, օրինակ, որ եկեղեցու աւագ դուռը յատուկ օծւում եւ օրհնւում է, այսինքն՝ սրբացւում է: Ընդ որում, օծւում են դուռն ինքը եւ դռան շեմն ու բարաւորը[41]: Յատուկ սրբացուած կարգավիճակ ունի եւ դռան շեմը: Սրա դրսեւորումներից է, օրինակ, այն, որ եկեղեցու դռան շեմը չեն տրորում, դրա վրայ չեն կոխում, զի դա եւս օծուած պիտի լինի: Իսկ դռան վերի մասի կարեւորութիւնը լաւագոյնս երեւում է բարաւորներով: Բարաւորը, կառուցողական առումով ընդամենը դռան կողային սիւները վերեւից իրար կցելու – պահելու եւ դրանից վեր դրուող պատը կրելու դեր ունի, սակայն դրան հակառակ՝ այն կառուցւում եւ ձեւաւորւում է յատուկ շքեղութեամբ: Յաճախ բարաւորները իրենց վրայ կրում են շէնքի (եկեղեցու) ամենակարեւոր դերն արտայայտող բովանդակութեան գրութիւններ եւ պատկերներ[42]: Պաշտամունքի առարկայ են նաեւ դռան սիւները. այսօր իսկ յաճախ կարելի է տեսնել, թէ ինչպէս հաւատացեալ անձը երկիւղածութեամբ համբուրում է եկեղեցու դռան սիւները: Այսինքն, տեսնում ենք, որ դուռն իր բոլոր կողմերով սրբացուած, ուրեմն նաեւ՝ պաշտուող առարկայ է[43]:

Նկար 10.
Նորավանքի գաւթի դռան եւ պատուհանի բարաւորները. գործ Մոմիկ վարդապետի

41 Այս տեղեկութիւնն իմ խնդրանքով «Մաշտոց» ժողովածուից քաղել է Եղիա աբեղայ Խաչատրեանը, որի համար շնորհակալութիւն եմ յայտնում նրան:

42 Բարաւորներին բացի շէնքի շինութեան մասին արձանագրութիւններից յաճախ ունենք շէնքի ներսի բովանդակութիւնը բացայայտող պատկերներ: Դրա լաւագոյն օրինակներից յիշենք Մոմիկի ձեւաւորած՝ Նորավանքի բարաւորները (ստեղծուած՝ 1321 թ. երկրաշարժից յետոյ գաւթի նորոգման առիթով): Այստեղ գաւթի դռան բարաւորին Աստուածածնի պատկերն է մանուկ Յիսուսի հետ, իսկ դրանից վեր՝ ասես երկրորդ յարկի դռան ձեւով դրուած պատուհանի բարաւորին՝ պատկերուած է Հայր Աստուած՝ արարչագործութեան վերջին՝ վեցերորդ օրուայ գործողութեան ներկայացմամբ. տե՛ս նկար 10:

43 Հետաքրքիր է, որ գահը, ըստ մեզ հասած աւանդական կառուցուածքի, եւս ունի դուռ յիշեցնող կազմութիւն:

Իր ամենաէական յատկանիշներով դռան հետ համատեղելի է նաեւ վիշապը: Այսպէս. վերը տեսանք, որ վիշապը, լինելով ջրի, գետի արտայայտութիւն, ունի սահմանային այն դերը, որ ունի գետը, ջուրը: Այսինքն, վիշապը եւս ունի սահմանի իմաստ[44]: Նոյն իմաստն են կրում «շեմը անցնել» եւ «ջուրը անցնել» արտայայտութիւնները[45]: Եթէ սրա հետ համադրենք վիշապ – ջուր նոյնութիւնը, կը ստանանք, որ շեմն անցնելը նոյնն է, ինչ վիշապի վրայով (կամ միջով) անցնելը:

Նկար 11.
Աւանի կաթողիկէ եկեղեցու դռան բարաւորը վիշապակոթողով. 585-590թթ.

Ասուածի լաւագոյն օրինակ կարող է ծառայել Աւանի Զ դարի երկրորդ կէսի[46] եկեղեցու դռանը իբրեւ բարաւոր դրուած վիշապակոթողը (նկար 11): Այստեղ պարզապէս ունենք վիշապի (եւ հէնց վիշապակոթողի) համատեղում–նոյնացում դռան (դրա ամենակարեւոր մասերից մէկի՝ բարաւորի) հետ: Ընդ որում, էական է, որ այս շինութիւնը կառուցուած է Հայոց Կաթողիկոսի կողմից իբրեւ Կաթողիկէ: Այն վերաբերում է վաղ քրիստոնէական ճարտարապետութեանը, երբ, բնականաբար, տակաւին առաւել կենսունակ պիտի լինէին նախաքրիստոնէական խորհրդանշական պատկերացումները: Ցիշենք, որ եկեղեցու դռան բարաւորը յատուկ օծում է ստանում: Ուրեմն, այս **վիշապակոթողը պիտի օծուած լինի իբրեւ բարաւոր**: Վստահ կարելի է լինել, որ այդ վիշապակոթողը իբրեւ բարաւոր տեղադրողները եւ օծողները իմացած պիտի լինէին դրա ունեցած հնագոյն կրօնական–դիցաբանական իմաստը եւ երբէք նրանք չէին տեղադրի վիշապակոթողը եկեղեցու դռանն իբրեւ բարա-

---

Գահի երկու կողմերի բազկակալները յենուած են դռան սիւների նմանուող յենարանների վրայ. տե՛ս, օր., նկար 9-ի գահը, որի երկու բազկակալների սիւների դիմերեսներին պատկերուած են խորհրդանշական կենդանիները: Եւ յիշենք նաեւ, որ գահն ինքը եւս սրբացուած առարկայ է: Գահը եւս համբուրում են, այսինքն՝ առկայ է գահի պաշտամունքը այնպէս, ինչպէս կայ դռան պաշտամունք:

44 Այս առումով հնարաւոր է վիշապակոթողներին զուգադրել որոշ առումներով դրանց նմանուող՝ Արտաշէս արքայի կանգնեցրած յուշարձանները, որ յայտնաբերուած են Հայաստանի տարբեր վայրերում եւ ընդունուած տեսակէտի համաձայն սահմանաքարեր են եղել:

45 Հայերէնում ունենք առած. «*Մինչեւ խելոքը մտածի, խելառը ջուրն անց կը կենայ*»: Այստեղ «ջուրն անցնելը» ամեն ինչից զատ ունի նաեւ «սահմանն անցնելու» իմաստ: Տեղին է յիշել նաեւ Յովհաս Կեսարի հետ կապուած՝ «*Ռուբիկոնն անցնեք*» արտայայտութիւնը: Անշուշտ, սա ունի պատմական յենք, սակայն սա նաեւ արտայայտութիւնն է որոշակի մտածողութեան, եւ ըստ այդ մտածողութեան գետը (Ռուբիկոնը) հանդէս է գալիս իբրեւ յոյժ էական սահման:

46 Աւանի Ծիրանաւոր կաթողիկէն 585–590 թթ. կառուցել է Յովհան Բագարանցի Կաթողիկոսը (584 – 602), տե՛ս այս մասին **Գ.Բ. Բրուտեան,** Օրացոյց Հայոց, էջ 95:

ւոր, եթէ այդ կոթողի նախնական (իրենց յայտնի) իմաստի մէջ թէկուզ չնչին հակադրութիւն տեսնէին իրենց կառուցած դռան խորհուրդի հետ: Այսինքն, կառուցողների համար վիշապն ու դռան բարաւորը պիտի ունենային իրար չհակասող (առաւել հաւանական է՝ իրար համընկնող) իմաստներ: Այս ամենը ցոյց են տալիս, որ ըստ էութեան չկայ հակասութիւն դռան եւ վիշապի կրած խորհուրդների միջեւ: Ուստի, լիովին հնարաւոր է, որ կենդանաշրջանի միեւնոյն հատուածը իր պարունակած չորս կենդանակերպերով համարուէր միաժամանակ թէ՛ դուռ–դարպաս, եւ թէ՛ վիշապ: Իսկ ինչ կերպ պիտի իրար ներդաշնակուած–համաձայնեցուած լինեն երկնային դուռն ու վիշապը: Հարցիս բնական պատասխանն այն է, որ այդ վիշապի գլուխն ու տուտը համապատասխանեն դռան երկու կողմերին՝ Յուլին ու Առիւծին: Եւ, քանի որ երկնային Յուլը ներկայացուած է գլխով, իսկ Առիւծը՝ պոչով, բնական է, որ վիշապի գլուխը պիտի համապատասխանի Յուլին, վիշապի տուտը՝ Առիւծին:



Նկար 12
Գլուխն ու տուտը իրար կցած վիշապի պատկեր Մաշտոցեան Մատենադարանի թիւ 2001 ձեռագրից (1373թ.), էջ 238բ

Կրկին դառնալով Աւանի կաթողիկէ եկեղեցու բարաւոր–վիշապին, նկատենք ոչ երկրորդական մի հանգամանք եւս: Այս բարաւոր–վիշապի գլուխն ու տուտը հանգչում են դռան երկու կողմնային սիւներին, եւ վիշապի գլուխը կցուած է դռան աջ կողմի սեանը, իսկ տուտը՝ ձախ սեանը: Հէնց այսպիսի համապատասխանեցում ունենք երկնային վիշապի ծայրերի եւ դուռ համարուած Յուլ–Առիւծ կենդանակերպերի միջեւ. երկնային վիշապի գլուխը Յուլն է, տուտը՝ Առիւծը: Եւ երկրից նայողին էլ այս դռան աջ կողմում Յուլն է երեւում, ձախում՝ Առիւծը: Այսինքն, այս վիշապակոթողը դռան հետ ներդաշնակեցուած է ըստ ամենայնի, հաշուի առնելով նաեւ աջ ու ձախ կողմերի համապատասխանութիւնը:

Եթէ սրա հետ նայենք եւ այն, որ մեր հէքեաթների սկզբնամասի վիշապը, տարածքը շուրջանակի փակելով, գլուխը դրել է պոչի վրայ, ապա կը ստանանք, որ այս վիշապի սկիզբն ու վերջը համատեղուած են, այսինքն, դրանց արանքում տարածք չկայ[47]: Ստացւում է, որ այս դուռը հէնց վիշապի գլխի

47 Այսպիսի տարի-վիշապի պատկերման մի ուշագրաւ օրինակ է Մաշտոցեան Մատենադարանի թիւ 2001 ձեռագրի 238բ էջի օրացուցային բոլորակ աղիւսակը, որի կենտրոնական մասում ունենք գլուխն ու տուտը իրար կցած ձկնակերպ վիշապի պատկեր (տե՛ս նկար 12): Աղիւսակիս կենտրոնում հէնց վիշապի պատկերին կից գրուած է. «*Լեւիաթանն է այս [ի] համատարած ծովն*»: Այս բոլորակ աղիւսակի բացատրութիւնը նոյն ձեռագրի 245ա էջին է, ուր սա կոչուած է հէնց վիշապ. «*զմուտ վիշապին այսպէս արա, կալ զմեծ թվական հայոց...*»:

ու տրան կցման մասում է, այսինքն, դուռն այնտեղ է, որտեղ ժամանակ, այսինքն՝ ընթացք, տեւողութիւն չկայ (քանի որ այս՝ շուրջանակի պատող վիշապը հէնց տարին է խորհրդանշում): Եթէ սա համադրենք երկնային դռան հետ, կը ստացուի, որ այդ դռան երկու ծայրերը պիտի լինեն համատեղուած, նոյնացուած, եւ դրանց միջեւ պիտի ոչինչ չլինի: Դռան երկու ծայրերին Յուլ եւ Առիւծ կենդանակերպերն են: Նշանակում է, պիտի ինչ-որ իմաստով իրար կցուած–համատեղուած լինեն այս կենդանակերպերը: Անշուշտ, երկնքում Յուլ եւ Առիւծ կենդանակերպերը իրար կից չեն եւ գիտենք, որ դրանց միջեւ կան եւս երկու կենդանակերպեր (Երկուորեակներն ու Խեցգետինը): Ուրեմն, այս համատեղումը պիտի լինի ոչ թէ սովորական առումով, այլ ինչ-որ ուրիշ կերպ:

Այս «համատեղումը» հասկանալուն օգնում է Նախահայկեան օրացոյցի հետ կապուած այն հիմնարար – սկզբունքային պատկերացումը, համաձայն որի, պաշտուող ասպղի չերեւալու շրջանը համարուել է **տարուց դուրս**: Եւ այս ասպղի չերեւալու ժամանակահատուածն էլ համընկել է Արեգակի անցմանը **Յուլից Առիւծ**: Այսինքն, պաշտուող ասպղի չերեւալու շրջանը, որ զուգադիպել է Արեգակի անցմանը Յուլ կենդանակերպից Առիւծ, համարուել է **տարուց, ժամանակի** բնականոն **ընթացքից դուրս**: Ստացւում է, որ մի կողմից տարեշրջանի այս՝ **Յուլից Առիւծ ժամանակահատուածը համարուել է տարուց դուրս**, իսկ միւս կողմից՝ այդ նոյն Յուլ եւ Առիւծ կենդանակերպերը համապատասխանել են վիշապի գլխին ու տրանը, եւ դրանք կցուած են եղել իրար, եւ **դրանց արանքում ոչինչ չի եղել**: Այսինքն, վիշապ–տարեշրջանի հէնց այն մասում, ուր պիտի ոչինչ չլինի, գտնուում են արտատարեկան (տարուց – ժամանակի բնականոն ընթացքից դուրս եղած) օրերը: Եւ սա՛ է պատճառը, որ այս արտատարեկան օրերին են զուգադրուած արեգակնային հերոսի Անդրաշխարհում գտնուելը, տարբեր Կախարդական ու Մութ աշխարհներում սխրանքներ գործելը, որոնք բոլորը տեղի են ունենում տարեմուտի պահի մէջ՝ սովորական ժամանակից դուրս: Տեղին է յիշել այս առիթով, որ հէքեաթի սկզբնամասում, երբ շուրջանակի պատող վիշապը տղային ուղարկում է Սինամի գաղտնիքը բերելու, նա խօսում է տղայի հետ: Խօսում են, բնականաբար, բերանով, բերանն էլ, ինչպէս գիտենք, գլխի վրայ է տեղակայուած: Այսինքն, որպէսզի վիշապը խօսէր տղայի հետ, անհրաժեշտ էր, որ տղան լինէր այդ վիշապի **գլխի մօտ**: Եւ հէնց այստեղից (վիշապի գլխի մօտից) տղան դուրս ու ներս է անում վիշապի մարմնով կազմուած շրջանից: Այսինքն, հէնց վիշապի գլխի մօտ է այն միակ կէտը, որով հնարաւոր է ելումուտ անել այս կախարդական շրջանի մէջ[48]: Եւ տղան այս միակ կէտով դուրս է գալիս վիշապի կազմած շրջանից ու եւ մտնում այնտեղ:

Այստեղ կարող է թիւրիմացութեան տեղիք տալ հետեւեալը: Երկնային վիշապը, որի հետ կապուած են Արեւի եւ Լուսնի խաւարումները, համապատասխանում է կենդանաշրջանի Յուլ – Առիւծ հատուածին (չորս կենդանակերպեր): Միւս կողմից շուրջանակի պատող վիշապը ներկայացնում է ամբողջ տարեշրջանը: Սա համապատասխանում է Առիւծ եւ Յուլ կենդանակերպերի միջեւ եղած տարածութեանը: Սակայն այստեղ կայ էական տարբերու-

48 Նոյնը վերաբերում է նաեւ տղայի հետ վիշապի կազմած շրջանի մէջ յայտնուած միսներին: Այս նոյնը վերաբերում է նաեւ տղայի վերադարձից յետոյ վիշապի հետ տղայի հանդիպման կէտին: Տղան վիշապին պատմում է իր իմացած գաղտնիքը, ուրեմն, վիշապը լսում է նրան: Իսկ լսելը լինում է ականջներով, որոնք եւս տեղակայուած են գլխի վրայ:

թիւն: Այս վիշապները նոյնական չեն: Դրանցից առաջինը համապատասխանում է արտաքարեկան օրերին (60 – 70 օր), երկրորդը համապատասխանում է բուն տարուն (շուրջ 300 օր): Եւ եթէ առաջինը կենդանաշրջանի Յուլից Առիւծ մասն է, ապա երկրորդը Առիւծից Յուլ մասն է: Սրանք կենդանաշրջանի իրարից տարբեր, սակայն իրար լրացնող հատուածներ են: Ուստի մի դէպքում վիշապը համապատասխանում է մի՛ (փոքր) հատուածին, միւս դէպքում՝ կենդանաշրջանի մի այլ (մեծ) հատուածին, ընդ որում, այս հատուածները իրար լրացնում են. դրանց գումարը ամբողջ կենդանաշրջանն է: Էական է, որ վիշապի եւ կենդանաշրջանի հատուածների զուգադրման այս երկու տարբերակներն էլ վկայուած են հայկական մշակութային իրողութիւններով: Դրանցից առաջինը (վիշապ – Յուլից Առիւծ հատուածը) վկայուած է Զ. դարի կաթողիկոսաշէն տաճարի բարաւորով (տե՛ս նկար 11), երկրորդը՝ ԺԴ. դարի հայկական ձեռագրի նկարազարդ բոլորակ-աղիւսակով (նկար 12): Այսինքն, այս երկու համապատասխանեցումներն էլ մեզ վկայուած են մշակոյթի նիւթական կրիչներով: Ուրեմն, այստեղ սխալի տեղ չկայ: Մնում է գտնել սրա բացատրութիւնը:

Այդ բացատրութիւնը գտնելու համար վերստին յիշենք շարքիս նախորդ յօդուածում ստացուած այն արդիւնքը, որ Ամանորի գիշերուայ եզակի պահը դրուած է եղել ժամանակի բնականոն ընթացքից դուրս եւ այդ մեն մի եզակի պահը համարժէք է դարձուած եղել ամբողջ տարեշրջանին, այսինքն՝ յաւէրժութեանը: Այսինքն, պահը՝ ժամանակի կարճագոյն հատուածը հաւասարեցուած է եղել ժամանակի ամենաերկար հատուածին՝ տարեշրջանին (յաւերժութեանը): Սա վերաբերում էր ժամանակին: Նոյն կերպ պիտի ունենանք երկնային տարածութեան ընկալումը (որ, ըստ էութեան, դարձեալ ժամանակային իրողութիւն է): Երկնային տարածութեան մէջ արտօնուած մասը Առիւծից Յուլ հատուածն է (որ համապատասխանում է պաշտուող աստղի երեւալու շրջանին): Ահա այս՝ արտօնուած մասը համապատասխանեցուած է նոյն երկնային տարածութեան արգելուած մասին (Յուլից Առիւծ հատուածին, որն այդ նոյն աստղի չերեւալու շրջանն է): Ընդ որում, ճիշդ այնպէս, ինչպէս ամբողջ տարեշրջանը համապատասխանեցուած է Տարեմուտի եզակի պահին (որը, փաստօրէն, մեր աշխարհի համար տեսողութիւն չունի), նոյն կերպ այս արտօնեալ ժամանակը համապատասխանեցուած է դուռ համարուած (արգելուած) հատուածին[49]: Կենդանաշրջանի այս երկու հատուածներն ունեն ժամանակային իմաստ, եւ եթէ նրանցից մէկը համարուել է վիշապ, ապա բնական է, որ միւսը եւս վիշապ համարուած լինի:

Ա՛յս է պատճառը, որ այս երկու՝ իրար հակառակ խորհուրդներ կրող մասերը համապատասխանեցուած են երկու տարբեր վիշապների: Ընդ որում, այս տարբեր վիշապները երկնքում պիտի ունենան հակառակ ուղղութիւններ. դրանց երկուսի գլուխները միատեղուած են իրար եւ տրերն էլ՝ իրար: Այսինքն, եթէ դրանցից մէկում շարժումը լինի աջից ձախ, ապա միւսում պիտի լինի ձախից աջ: Եւ սա լիովին ներդաշնակ է նրան, որ սրանցից մէկի ընթացքում արեգակնային հերոսի աստղը Լոյս աշխարհում է (շարժում), իսկ միւսի ընթացքում նոյն աստղը Անդրաշխարհում է (շարժում): Բնականաբար, այս հակառակ աշխարհներում

49 Դուռը կարելի է համարել ոչ մի տեղ գոյութիւն չունեցող, քանի որ դուռը ներսի ու դրսի արանքում է. այն ոչ ներսին է «պատկանում», ոչ դրսին: Այսինքն, դուռը երկու հակադիր աշխարհների արանքում, եզակի կարգավիճակ ունեցող «տեղ» է: Եւ այս առումով դուռը լիովին նման է Տարեմուտի եզակի պահին, որ ոչ հին տարուն է պատկանում, ոչ նորին: Այսինքն, տարածութեան մէջ դուռը նոյնն է, ինչ Տարեմուտի պահը ժամանակի մէջ:

շարժումները պիտի լինեն իրար հակառակ ուղղութիւններով: Այս ամենը ի նկատի առնելով, բնական պիտի դիտուի նաեւ այն, որ կենդանաշրջանի իրար լրացնող երկու հատուածներ նշանակուած են եղել միեւնոյն նշանով՝ վիշապով: Միայն թէ դրանցից մէկը մեծ է, միւսը՝ փոքր, մէկը աջից ձախ համաչափութեամբ է, միւսը՝ ձախից աջ, մէկը արտօնեալ ժամանակին է վերաբերում, միւսը՝ արգելուածին եւ, ի վերջոյ՝ մէկը նշանակում է տարեշրջանը, միւսը՝ տարուց դուրս համարուած արտատարեկան – արտաժամանակային «տեւողութիւնը»:

Ամփոփելով վերը կատարուած քննութեան ամենաէական արդիւնքները, տեսնում ենք, որ.

ա. Ամանորի տօնը նախապէս պիտի եղած լինի արարչութեան յիշատակի տօն,

բ. Հէքեաթներում եւ Սասնայ Ծռեր դիցավէպում առկայ ջրարգել եւ շուրջանակի պատող վիշապները պարզապէս հոսող ջրի (գետի, աղբիւրի) արտայայտութիւնն են,

գ. Հէքեաթներում հերոսի անցումը ցուլի եւ առիւծի պահպանած դռնով ներս ու դուրս եւ դրա հետ կապուած՝ կենդանիների կերերի փոխատեղումը նշանակել է երկնքում Հայկի աստղի չերեւալու շրջանը (երբ Արեւգակն անցել է Ցուլից Առիւծ) եւ այդ ընթացքում այդ աստղի եւ Արեգակի փոխադարձ դիրքի շրջումը հակառակի (աստղը Արեգակի ձախ կողմից անցել է աջ կողմը):

դ. Կենդանաշրջանի Ցուլից Առիւծ հատուածը միաժամանակ համարուել է թէ՛ դուռ, եւ թէ՛ երկնային վիշապ: Եւ իրենց խորհուրդներով իրար հետ համադրուած – նոյնացուած են եղել երկնային վիշապն ու դուռը:

ե. Վիշապով են նշանակուած – ներկայացուած եղել կենդանաշրջանի ու դրան համապատասխան՝ տարեշրջանի երկու տարբեր, իրար լրացնող հատուածներ. Ցուլից Առիւծ հատուածը եւ Առիւծից Ցուլ հատուածը ու սրանց համապատասխան՝ արտատարեկան օրերը եւ բուն տարին:

Յօդուածաշարիս խնդիրն է եղել ցոյց տալ, որ հայկական հրաշապատում հէքեաթները եւ Սասնայ Ծռեր դիցավէպը պարունակում են մեծ ծաւալի օրացուցային–տիեզերաբանական տեղեկոյթ, որի վերլուծութեամբ հնարաւոր է էական–սկզբունքային գծերով վերականգնել դրանց ակունքներին ժամանակակից օրացոյցը եւ տիեզերաբանական–դիցաբանական պատկերացումները: Խնդիր է եղել նաեւ որոշ սահմանափակ օրինակներով ցուցադրել այդ վերականգնումը եւ ստանալ մեզ հետաքրքրող օրացոյցի սկզբունքային ուրուագծային պատկերը: Սրանով է պայմանաւորուած այն, որ քննութեան են առնուած յոյժ սահմանափակ թուով հէքեաթներ եւ այդ հէքեաթների պարունակած տեղեկոյթի միայն որոշ մասը: Անշուշտ, այսքանով չեն սահմանափակում մեր քննութեան առած հէքեաթների պարունակած օրացուցային–ժամանակային-տիեզերաբանական առնչութիւնները: Այդուհանդերձ, հաշուի առելելով յօդուածի սահմանափակ հնարաւորութիւնները, այս հրապուրիչ հետազօտութեան ծաւալումն ու առաւել խորացումը կը թողնենք այլ առիթի: